

Նշուեցաւ Թուշիի ազատագրման 25-ամեակը



Կարդալ էջ 12:

Կարօ Փայլան Օթթաուայի մէջ կը մասնակցի Գանատայի խորհրդարանի անդամներու հետ Հայ Դատի յանձնախումբի կազմակերպած հանդիպումին



Կարդալ էջ 12



Թորոնթօ ալցելուիթեան ընթացքին Կարօ Փայլան ծաղկեպսակ զետեղեց Թորոնթոյի Հայ Կեդրոնի Հայոց Յեղասպանութեան նուիրուած յուշարձանին մօտ: Լուսանկարը՝ Իշխան Ղազարեանի:

2017
HR-V
 STARTING FROM
\$20,950*

HONDA
GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
 Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
 www.hondagabriel.com
 < OPEN SATURDAYS >

Kevork Asadourian
Vahan Vartanian

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable in selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



2173 Ste-Catherine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

2425 boul. Curé-Labelle,
Laval, QC H7T 1R3
(450) 978-2333

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

7250 Boul. Des Roseraies,
Anjou, QC H1M 2T5
(514) 493-6667

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul. Des Sources,
Roxboro, QC H8Y 3C5
(514) 685-5050

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
(514) 904-6789

2655 ave. des Aristocrates,
Laval, QC H7E 0H3
(450) 665-8801

225 Rue Peel
Montréal, QC H3C2G6
(514) 905-6499

1240 Ave Eglinton O,
Mississauga, ON L5V 1N3
(905) 363-0707

20 Ashtonbee Road
Scarborough, ON M1L 4R5
(416) 642-1515


www.groupeadonis.ca

Suivez-nous !



#M4H

@MarchForHumanity
Marche pour l'humanité



27 MAY 2017

MARCH for and the Prevention of Genocides HUMANITY

UNITED COMMITTEE OF
ARMENIAN ORGANIZATIONS
OF QUEBEC

We say NO to genocides!



START

12:30PM

Musée des Beaux Arts
(Pavillon de la Paix)
2075 Rue Bishop

IN PARTNERSHIP WITH



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Շուշիով սկիզբ առած յաղթարշաւը շարունակելու վճռականութեամբ

«Պայքարով պէտք է նուաճենք մեր ապրելու իրաւունքը...»

Ոչ ոք չի կասկածում, որ բոլորս միասին ենք, եւ այս պայքարը միասին պէ՛տք է աւարտենք, համոզուած եմ, յաղթանակով՝»:

ԼՂՀ Գերագոյն խորհուրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչեան

1992-ի Մայիս 8-ին կերտուած Շուշիի յաղթական ճակատամարտը, անկիւնադարձային թուական կը հանդիսանայ նորօրեայ մեր ազատամարտի տարեգրութեանց մէջ: Շուշիի ազատագրումով եւ հայ զինուորի արի խոյանքով, Արցախ տարածաշրջանէն ներս կը դառնար աշխարհաքաղաքական գործօններու վրայ ազդեցիկ ռազմաքաղաքական միաւոր:

Հայոց անկախ պետականութեան արեւելեան դարպասը հանդիսացող Շուշիի ազատագրումը քաղաքական անհրաժեշտութիւն մըն էր, գոր կերտեցին Արցախեան գոյամարտին շուրջ համախմբուած ազգային ուժերը:

Շուշիին տիրողը՝ կը տիրէ Արցախին: Արցախին տիրողը, իր ազդեցութեան գօտիին տակ կ'առնէ Անդրկովկաս, Թուրքիա եւ Իրան աշխարհագրական եռանկիւնին ծիրէն ներս տնտեսական եւ քաղաքական լծակները: Պատմաքաղաքական այդ հանգրուանին, Արցախին վիճակուած էր չըջանային քարտէսները արդարօրէն գծելու պատմական առիթը: Շուշիի ազատագրումով, ձեւազեղուած սահմանները կը վերադառնային պատմականօրէն ճշգրտուած իրենց հորիզոնականներուն:

Անդրկովկասի տարածքային հիմնախնդիրները, ուշ կամ կանուխ, կրկին պիտի դառնան շահագրգիռ կողմերու քաղաքական սեղանին վրայ գլխաւոր օրակարգ: Ազդեցութեան ոլորտներու վերադասաւորման յառաջիկայ գործընթացին, ռազմավարական անհրաժեշտութիւն է լուծման որեւէ տարբերակի ձեւաւորման մէջ հիմնական դերակատար ըլլալը:

Արցախն ու Շուշին ազատագրուած են, որպէսզի հարթուի ուղին գալիք նուաճումներուն, որոնք հայ ժողովուրդի ազգային իրաւունքներուն եւ արդար դատին վերատիրացման համար քաղաքական յառաջիկայ մեր մարտահրաւերներն են տարբեր ճակատներու վրայ:

Այս է Շուշիի յաղթական պատգամը: Ազատագրուածը պահելու եւ ապագայ յաղթանակներուն սեւեռելու պատգամը: Շուշիէն ետք սկիզբ առաւ Լեռնային Ղարաբաղի միւս տարածքներու ազատագրումը: Իրար յաջորդեցին Կովսականի (Զանգեզուր), Քաջաթաղի (Լաչին) եւ Քարվաճառի (Քելբաջար) ազատագրումը, որոնք ռազմավարական իրենց նշանակութեամբ կը հանդիսանան Հայաստանի արեւելեան սահմաններու պաշտպանողական դարպասը: Ռազմապիտակական առումով, այս շրջաններու հզօրացումով, ամուր պատուար եւ թիկունք կ'ունենայ Զանգեզուրը:

Ողջո՛յն Արցախի Հերոս Ժողովուրդին

Ողջո՛յն Արցախի մեր հերոս ժողովուրդին:

Ողջո՛յն Արցախի անկախութիւնը կերտած մեր քաջ բանակին:

8 մայիս 1992 թուականը մեր ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ պիտի մնայ խորհրդանշել Արցախի ժողովուրդի խոր հաւատքին, ամուր վճռականութեան ու արեւան դնով իր ազգային իրաւունքը պաշտպանելու գիտակից յանձնառութեան:

8 մայիս 1992 թուականը մեր ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ արձանագրուած պիտի մնայ իբրեւ նոր Սարգարապատ՝ Շուշիի ազատագրութեամբ եւ մեր հերոս տղոց խիզախութեամբ նուաճուած:

Անցան 25 տարիներ, սակայն Արցախի անկախութեան վերահաստատման մէջ ճակատագրական դեր ունեցած Շուշիի ազատագրումը իր յաւերժաբայ անուանով միշտ պիտի մնայ կենդանի մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Այսօր, 25 տարիներ յետոյ, սոսկ անցեալի դէպք մը չէ, որ կը նշենք, այլ Շուշիի ազատագրութեանց եկող պատգամին մեր հաւատարմութիւնն է, որ կը վերահաստատենք յայտարարելով՝

Թէ Արցախի ժողովուրդը պիտի մնայ ամբօրէն կառչած հաւատքով ու կամքով վերատիրացած իր ինքնորոշման իրաւունքին,

Թէ Արցախի արի բանակը պիտի մնայ իր արիւնով ազատագրած իր հայրենի հողին արթուն պահպանման ու հզօր պաշտպանը:

Այսօր արդար ցնծութեան ու հպարտութեան օր է: Այսօր ծով զոհողութեամբ կերտուած յաղթանակի օր է: Պատերազմի դաշտին վրայ նուաճուած յաղթանակը կոչուած ենք ամբացնելու, ծաւալելու ու հարստացնելու՝ Արցախի հողին մեր ամուր կապուածութեամբ, Արցախի անկախութեանն ո՛չ մէկ զիջում կատարելու մեր յանձնառութեամբ, Արցախի բանակը աւելի հզօրացնելու մեր զօրակցութեամբ, Արցախի անտեսութիւնը հարստացնելու մեր մասնակցութեամբ:

Մարդկային դարաւոր պատմութիւնը կը վկայէ, թէ իրաւունքը չի տրուիր, այլ՝ կ'առնուի. եւ բռնաբարուած իրաւունքը, ի պահանջը հարկին, արեւան վկայութեամբ կ'առնուի: Այս կը վկայէ Արցախի ազատագրումը:

Արցախը պարիսպն է Հայաստանի պաշտպանութեան:

Արցախը ամուր երաշխիքն է հայրենի հողին վրայ հայ ժողովուրդի ազատ ու անկախ ապրելու իրաւունքին:

Արցախը իր հերոսներու արիւնով ներկուած յոյսի ճանապարհ է՝ հայ ժողովուրդը դէպի ամբողջական Հայաստան առաջնորդող:

«Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ» (Հովհ. 8. 31): Արդ, միա՛սնաբար, իբրեւ մէկ ազգ, հզօրացնենք, շէնցնենք, ծաղկեցնենք ու պաշտպանենք Արցախը:

Փա՛ռք Արցախի ու յատկապէս Շուշիի ազատագրութեան ճանապարհին վրայ իրենց արիւնը թափած մեր հերոսներուն:

Յարգա՛նք Արցախի ղեկավարութիւնը վարած ու վարող մեր իմաստուն ղեկավարներուն:

Պատի՛ւ Արցախի մեր քաջ ժողովուրդին:

Եւ բի՛ւր օրհնութիւն հայրապետական՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մայրավանքէն:

Աղօթարար՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՏԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝ www.sourphagop.org



Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website www.arsarmenianschool.ca

SERVING THE ARMENIAN COMMUNITY SINCE 1984
Please call Serge Khatchadourian



STERLING AUTO CENTRE
416.494.9595

3815 Victoria Park Ave. (At Gordon Baker)
Toronto, ON M1W 3Y6



Gary Chahinian
ABR., Broker of Record - Owner
RE/MAX DIAMOND Realty Inc.
W torontohomes.ca
E gary@remaxdiamond.com

416-258-8892



Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337



ANI Restaurant

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5



Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0



Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotmial.com
www.suttongroupadmiral.com



hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9



Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5

Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com



I.D.A.
Part of the **REXAL** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.
2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**



ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

Շուշիի ազատագրման ժամանակագրություն

29 Ապրիլ 92

Ազերիներ 700 զինուորներով եւ տասնեակ մը հրասայլերով Շուշիէն կը յարձակին Ստեփանակերտի եւ Քարին Տակի վրայ հասնելով մինչեւ Ստեփանակերտի դռները: Հայկական ուժերու բուռն դիմադրութեան շնորհիւ ազերիները կը նահանջեն, տալով 10 զոհ, 20 վիրաւոր եւ զրահապատ կառք մը: Հայկական կողմը կու տայ 3 նահատակ եւ 5 վիրաւոր:

30 Ապրիլ 92

Ազերիները երկրորդ անգամ ըլլալով կը յարձակին Ստեփանակերտի վրայ: Հայկական ուժերը 4 նահատակ եւ 23 վիրաւոր տալով խիզախօրէն ետ կը մղեն յարձակումը:

1-2 Մայիս 92

Ազերիներ 1500 զինուորներ, 20 զրահապատ կառքեր եւ 3 ուղղաթիւններ կը կեդրոնացնեն Ստեփանակերտ-Շուշի ճակատին վրայ: Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը կը ուժեղանայ, ազերիներ վերջնական պատրաստութիւնները կը տեսնեն անցնելու համար մեծ յարձակումի մը Ստեփանակերտի վրայ, մինչ Թուրքիոյ նախագահ Էջզալ Պաքու կ'այցելէ:

3 Մայիս 92

Ազերիներ ուշ գիշերին 3-րդ անգամ ըլլալով կը դիմեն յարձակողականի մայրաքաղաք Ստեփանակերտի վրայ: Անոնք կը յաջողին գրաւել Ստեփանակերտի մօտակայ ռազմագիտական կարեւորութիւն ունեցող բլուրներ, ուրկէ ուժեր կը տեղայ նաեւ Ստեփանակերտի վրայ: Հայկական ուժերը բուռն դիմադրութիւն ցոյց կու տան. Լաչինի շրջանէն ազերիական ուժեր կը միանան Ստեփանակերտի վրայ յարձակող ուժերուն:

5 Մայիս 92

Մայիսի առաջին օրերուն ծայր առած բախումներուն հետեւանքով ինկած գիւնուորներուն թիւը կը հասնի 70-ի (երկուստեք): Ուշ երեկոյեան Արցախի խորհրդարանը նիստ մը գումարելով կ'որոշէ փոխել ազերիներու դէմ ցարդ կիրարկուող պաշտպանողական մարտաւարութիւնը եւ անցնիլ յարձակողականի, չէզոքացնելու համար հրետանիի այն կեդրոնները, ուրկէ կը ուժեղանայ մայրաքաղաք Ստեփանակերտը: Այս որոշումին գործադրութիւնը կը վստահուի Պաշտպանական նորհուրդին:

8 Մայիս 92

Կը սկսի Շուշիի ազատագրման գործողութիւնը:

Յարձակումներ

Հայկական ուժերը կը սկսին յարձակողականը քանի մը ճակատներու վրայ գուգահեռաբար:

Ա. Դէպի Ջանհասան. թշնամիի յառաջացեալ դիրքերուն մօտ՝ դէպի Ջանհասան ուղղուող ազատամարտիկներու խումբը անակնկալօրէն կ'ենթարկուի պաշարման:

Տեղի կ'ունենան կատաղի կռիւներ, որոնք նոր թափ կը ստանան Քէօսալարէն հասնող հայ ազատամարտիկներու օգնութեամբ: Կը կազմակերպուի արագ եւ ազդու յարձակողական, որուն ընթացքին կը գրաւուին 100 միլիմետրանոց այն հրթիռարձակները, որոնք ամիսներ շարունակ կը ուժեղանային Ստեփանակերտը:

Բ. Քէօսալարի ճակատ. դէպի Քէօսալար ուղղուող հայկական ուժերը նոյնպէս անակնկալօրէն կ'ենթարկուին պաշարման: Բուռն բախումներու ընթացքին կը սկսուի ազերիական հրասայլ մը եւ զրահապատ մը: Կ'իյնան բազմաթիւ նահատակներ եւ տասնեակ մը վիրաւորներ հայկական կողմէն:

Առաւօտեան ժամը 10:00-ին յարձակման ազդանշանէն 5 ժամ ետք, Ջանհասանը եւ Քէօսալարը կ'իյնան հայկական ուժերու հակակշռին տակ:

Դէպի Շուշի

Հայկական ուժերը Շուշիի պաշտպանողական ամրութիւնները կը ճեղքեն հիւսիսէն եւ արեւելքէն:

1.- Շոշ-Շուշի (արեւելք)

Մայիս 8-ի առաւօտեան ժամը 2:30-ին հայկական հրետանին կը սկսի Շուշիի անընդմէջ եւ ճշգրիտ ուժեղացումը:

Միաժամանակ Աշոտ Ղուկասի (Բեկոր) գլխավորութեամբ Դաշնակցութեան ջոկատը Շոշ գիւղէն կ'իջնէ ձոր եւ մագլցելով Շուշիի բարձունքը անակնկալօրէն կը յարձակի ազերիական ուժերուն վրայ, կը ստեղծէ ընդհանուր խուճապ ու կը կոտորէ թշնամիի դիմադրողականութիւնը:

2.- Ստեփանակերտ-Շուշի (հիւսիս)

Հայկական հրասայլերը եւ 4-րդ վաշտը, յառաջագահ ունենալով այլ դասակներ, Շուշի-Ստեփանակերտ մայր ճանապարհէն կուժելով կը բարձրանան դէպի Շուշի: Հայկական հրասայլերը կը հանդիպին ազերիական հրասայլային դիմադրութեան, որ կը չէզոքացուի հայկական հրետանիի ճշգրիտ ուժեղացումով: Այս յարձակման ընթացքին ուղղակի ուժեղացումն կ'ենթարկուի Հայկական հրասայլ մը, որուն մէջ գտնուող 2 զինուորները կը զոհուին:

Լիսագորի ռազմագիտական դիրքի ճնշում

Շուշիի գործողութեան մաս կը կազմէ նաեւ Շուշի-Լաչին ռազմագիտական ճանապարհին վրայ իշխող ազերիական Լիսագորի դիրքին ճնշումը:

Հ.Յ.Դաշնակցութեան վաշտը շրջանցելով Լեռնաշղթան, Սըղնախ գիւղի վրայով կը մօտենայ Լիսագորի: Վաշտը հետիոտն կը յառաջանայ անանցանելի ճամբաներէ: Կը քայլէ 12 ժամ եւ կը հասնի Լիսագորի եւ Զառիսուրի միջեւ բարձունքի մը եւ Լաչին: Այստեղ տեղի կ'ունենայ փոխ-հրացանաձգութիւն, որուն ընթացքին կը նահատակուի ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միութեան անգամ՝ ընկ. Վիգէն Զաքարեան:

8 Մայիս 92

8 Մայիսի երեկոյեան, Շուշին ամբողջութեամբ կ'ենթարկուի հայ ազատամարտիկներու հակակշռին:

Շուշիի ազատագրութեան ռազմավարական կարեւորութիւնը՝ անցեալը, ներկան եւ ապագան

«Շուշին հաշկական էր Շուշին նորից հաշկական է»

Այսպէս տարածուեցաւ լուրը Շուշիի ազատագրութեան, կայծակի արագութեամբ արդէն իսկ արձագանգած էր շրջանային եւ նոյնիսկ թրքական մամուլը: Յստակ էր՝ Ազրպէյճան կորսնցուցած էր պատերազմը եւ Ստեփանակերտը՝ փրկուած: Ռազմավարական նշանակութիւն

Շուշիի ազատագրման գործողութեան ծրագրի մշակումը կազմուեցաւ մարտապլան ամիսներուն, հետախուզական խումբերու կողմէ հակառակորդի ուժերու տեղակայման եւ քանակական տուեալները ճշգրիտ ետք: Յարձակման ճակատային գիծը շուրջ 25 քմ էր: Հակառակորդը հայկական կողմէն կը գերազանցէր մարդկային ուժով եւ սպառազինութեամբ: Մայիս 8-ին շուրջ 1200 մարտիկներ անցան յարձակողականի, իսկ ազերի զինեալները անակնկալի եկած՝ փոքր դիմադրութիւն ցոյց տուին եւ լքեցին իրենց դիրքերը: Շուշին դարձեալ հայկական էր:

Շուշիի ազատագրումը պատմական անհրաժեշտութիւն էր՝ վերականգնելու հայկական պատմական հողի վրայ հայերու ապրելու իրաւունքը, ինչպէս նաեւ՝ ամրապնդելու հայկական յաղթական մարտական ոգին: Այսպիսով, արցախեան մարտական շարժումը ԼՂՀ անկախութիւնը դարձուց աւելի իրական: Շուշիի ազատագրումը նաեւ տնտեսական անհրաժեշտութիւն էր. ցամաքային եւ օդային ճանապարհներու շրջափակման, ջուրի պակասի եւ Շուշիէն անընդհատ հրթիռակոծութիւններու պատճառով Ստեփանակերտի եւ մօտակայ շրջաններու մէջ տնտեսութիւնը վատ վիճակի մէջ էր: Հետեւաբար Շուշիի ազատագրութեամբ ամէն ինչ պիտի փոխուէր: Շուշիի ազատագրումով Ստեփանակերտի բնակիչները շունչ առին, եւ օրեր ետք արդէն շրջանի ազերիական զինուորական բոլոր կեդրոնները ոչնչացան: Շուշիի ազատագրման ժամանակ հայկական կողմը կ'ունենայ 57 զոհ. թշնամին՝ 250-300, 600-700 վիրաւոր եւ 13 գերի: Շուշիի ազատագրման յաջողութեւ լաչինի միջանցքի բացման ռազմագործողութիւնը, որ ճեղքեց ԼՂՀ-ի շրջափակման օղակը՝ սահման ունենալով Հայաստանի հետ:

Շուշիի ռազմական գործողութեան փայլուն աւարտը, մանաւանդ կորուստներու եւ տեղեկութեան նուազագոյն չափը, որ ստացաւ ռազմարուեստի մասնագէտներու հիացումը, առաջին հերթին հայ մարտիկներու խիզախութեան եւ լաւ կազմակերպման արդիւնքն էր: Այսպիսով, հայ ազատամարտիկները միայն երկու օրուան մէջ կրցան կոտորել թշնամիին դիմադրութիւնը եւ ազատագրել ռազմավարական առումով կարեւոր Շուշի քաղաքը:

Ներկայ իրավիճակ, հայեացք դէպի ապագայ
Այս յաղթանակը ունեցաւ համահայկական մեծ նշանակութիւն: Ան առիթ տուաւ մեզի՝ խորհելու ազգային շահերու, միասնականութեան մասին, վերադարձուց կամքի ազատ արտայայտման ու ինքնորոշման իրաւունքները պաշտպանելու հնարաւորութեան հաւատքը: Շուշիի յաղթանակը համաշխարհային հասարակութեան համար նոյնպէս բացայայտեց արցախեան հիմնահարցի նպատակներու եւ խնդիրներու ողջ լրջութիւնը:

Այսօր, երբ արցախեան զինեալ պայքարը առժամեայ դադարած է, հսկայ դիւանագիտական պայքար կը տարուի այս նպատակին շուրջ, շարաթ մը առաջ արդեն իսկ Քալիֆորնիոյ նահանգը ճանչցաւ Արցախի Հանրապետութիւնը, եւ այս քայլը պէտք է քաջալերէ այլ նահանգներ եւ երկիրներ՝ ճանչնալու ԼՂ Հանրապետութիւնը: Այս մէկը առիթ կ'ընծայէ Արցախին, որ տնտեսական կապեր հաստատէ այլ երկիրներու հետ, աստիճանաբար կը նուազի արտագաղթը եւ հսկայական ներդրում կատարուի երկրին մէջ: Աւելի՛ն. զարգացնելով դիւանագիտական յարաբերութիւնները՝ Արցախը պիտի վայելէ շատ մը երկիրներու դիւանագիտական աջակցութիւնը համաշխարհային գետնի վրայ, հոս անշուշտ հայկական սփիւռքը շատ ընկել է ունի: Հետեւաբար, եթէ կ'ուզենք վերահաստատել Շուշիի յաղթանակը, պէտք է որ ոչ միայն հպարտանանք այդ յաղթանակով, այլ աշխատինք հայրենիքի հզօրացման համար թշնամին մեր սահմաններուն մօտ է... միշտ պէտք է պատրաստ ըլլանք ոտնձգութիւններու եւ հաւատանք մեր միասնական ուժին:

Յաղթանակը մերն է...

ԵՂԻԿ ԹԱԾԾԱՆ



ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY

ՆՈՏԱՐ ԱԼԻՆ ԳԵՐԵՐԵՃԵԱՆ

Achat	Սնուտոր	Purchase	<p>180, rue Fleury ouest Montréal, Qc, H3L1T5</p> <p>T 514.382.7222 F 514.381.1818</p> <p>aline.b@notarius.net www.abnotaires.com</p>
Hypothèque	Սնչարժ Կարուածք	Mortgage	
Refinancement	Վերաֆինանսաւորում	Refinance	
Mandat	Պատուիր	Mandate	
Testament	Կտակ	Will	
Succession	Կարուածք	Estate	
Marriage	Սնուտորային	Marriage	
Procuratoin	Փոխանորդագիր	Power of Attorney	
Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais Services offered in Arabic, Armenian, French and English.			
Օտարալեզուները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:			

Մենք եգիպտացի հայեր ենք



Շաբաթ, Ապրիլ 29-ի երեկոյան ժամը 7-ին, Սուրբ Յակոբ վարժարանի «Բաստրոման» սրահին մէջ, տեղի ունեցաւ «We are Egyptian Armenians» վաւերագրական ֆիլմի ցուցադրութիւնը, ներկայութեամբ ֆիլմի բեմադրիչ Ուաշիտ Սուպիի, արտադրիչ Հանան Ազգաթի եւ հեղինակ Եւա Տատրեանի, որոնք յատկապէս այս առթիւ ժամանած էին Եգիպտոսէն, ինչպէս նաեւ Մոնթրէլի մէջ Եգիպտոսի դեսպանատան ներկայացուցիչը եւ 300 ազգայիններ: Ձեռնարկը կազմակերպուած էր Մոնթրէլի Եգիպտոսի Ընկերակցութեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Համագրային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան կողմէ, նախագահութեամբ ընկՏ. Շաբէ Կէօնճեանի:

Բարի գալուստի խօսքով ձեռնարկին բացումը կատարեց կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ Մանուկ Մանուկեանը, ապա բեմ հրաւիրուեցաւ Անդրանիկ Պէնօճեանեանը, որ չորս լեզուներով փոխանցեց յանձնախումբին խօսքը: Ան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Եգիպտոսի կառավարութեան, որ լայն բացաւ իր դռները հայ գաղթականներուն դիմաց եւ իրենց տուաւ տուն, որպէսզի սկսին նոր կեանք օտար երկրի մը մէջ: Ներշնչուելով իր խօսքերէն, Եգիպտոսի դեսպանը եւս խօսք առաւ եւ անդրադառնալով հայ ժողովուրդի բնոյթին մասին, գովասանքով յայտնեց իր գնահատանքն ու երախտագիտութիւնը ներկաներուն:

Ֆիլմը առաջին անգամ ներկայացուած է Գահիրէի 2016-ի Համաշխարհային ֆիլմի Փառատօնին, որ կը ներկայացնէ հայ համայնքին հարուստ եւ բարդ պատմութիւնը, թէ ինչպէ՞ս Հայոց Յեղասպանութենէն անմիջապէս ետք եւ դժուար պայմաններուն մէջ, հայերը նոր կեանք սկսած եւ իրենց ներգրուած բերած են Եգիպտոսի պատմութեան թէ՛ ընկերային եւ թէ՛ տնտեսական կեանքին մէջ: Կը նկարագրէ նաեւ Եգիպտոսի այն օրերուն հանդուրժողականութիւնը հանդէպ տարբեր ազգերու: Լաւագոյն օրինակը այս պարագային, Մուսա Լեւրան 4000 գաղթականներն էին, որոնք 1915-ին, հաստատուած են Պոր Սայիտ, եւ թէ Եգիպտոս այն օրերուն ինչպէ՞ս ընդունած է տարբեր ազգեր եւս. ինչպէ՞ս՝ յոյներ, հրեաներ, իտալացիներ եւ այլն, իրենց տալով հաւասար իրաւունքներ՝ ապրելու, աշխատելու եւ ազատօրէն պահպանելու իրենց լեզուն, մշակոյթն ու ավանդուածները, կառուցելու իրենց դպրոցները, մարզական ակումբներն ու եկեղեցիները:

Ֆիլմի ցուցադրութենէն անմիջապէս ետք, բեմ բարձրացան բեմադրիչը, արտադրիչն ու հեղինակը՝ փոխանցելու իրենց սրտին խօսքը: Անոնք շնորհակալութիւն յայտնելէ ետք կազմակերպիչ յանձնախումբին, ըսին, թէ սոյն ֆիլմը միջոց հանդիսացած է նոր սերունդին փոխանցելու Եգիպտոսի հարուստ անցեալը, որպէսզի անոնք իմանան, թէ բազմազանութիւնը ուժ է եւ ոչ տկարութիւն:

Ձեռնարկէն ետք, ներկաները ուղղուեցան դէպի Հայ կեդրոնի ճաշարանը, ուր ճոխ հիւրասիրութեան սեղաններու շուրջ, ատիթը ունեցան գրուցելու հիւրերուն հետ:

«Սանահին» մասնագիտի վարչութիւն

Փոքրերու պատմութեան ժամ

Անցեալ ամիս «Փոքրերու պատմութեան ժամ» տեղի ունեցաւ Ուրբաթ, 17 Մարտին: Խումբ մը ծնողներ իրենց սիրասուն երեխաներուն հետ ներկայ էին Համագրային «Մուշեղ Իշխան» գրադարանի մուտքին, կէսօրէ ետք ժամը 6:00-ին: Փոքրիկները մեծ խանդավառութեամբ մտան գրադարան, գրաւեցին իրենց տեղերը եւ հետաքրքիր աշուկներով հետեւեցան բժշկուհի Լորա Փաթաբֆալուիին պատմած «Վարազը եւ Ջատիկուան շաբաթը» պատմութեան:



Յայտագրին ընթացքին, փոքրիկները իրենց միտքերը արտայայտեցին հայերէնով, պատասխանելով ազնիւ ու ժպտաղէմ բժշկուհի Լորային հարցումներուն: Նիւթը Ջատիկ ըլլալուն, որպէս ձեռագիր աշխատանք, անոնք պատրաստեցին գեղեցիկ սակառներ, եւ գունաւոր հակիրթներ տեղաւորեցին անոնց մէջ: Ուրախ էր միջնորդը, եւ հաճելի էր տեսնել փոքրիկներուն հրճուանքն ու եռանդը:

Յաջորդ «Փոքրերու պատմութեան ժամ» տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 19 Մայիսին, կէսօրէ ետք ժամը 6:00-7:00, Համագրային-ի «Մուշեղ Իշխան» գրադարանին մէջ: Անհամբեր կը սպասենք ձեր փոքրիկներուն, որպէսզի միասնաբար վայելեն իւրաքանչիւր հրաշքուած պատմութիւն: Յիշեցնենք, որ պատմութիւններ տարբեր-տարբեր նիւթերով զարկ կու տան երեխային երեւակայութեան եւ կը զարգացնեն անոր մօտ արտայայտուելու կարողութիւնը:

Եթէ կ'ուզէք, որ ձեր երեխաներն ու թոռները մասնակից դառնան այս հաճելի յայտագիրներուն ու գտնուին նման առողջ միջնորդութիւն մէջ, ընկերակցեցէք մեզի հեռաձայնելով 514 826 1075 թիւին կամ գրելով հետեւեալ Ե-հասցէին megho7@hotmail.com:

Ս. Յակոբ վարժարանի Գործունակ գրադարանի բացում

12 Ապրիլին տեղի ունեցաւ Ս. Յակոբ վարժարանի նորոգուած գրադարանին բացումը, ներկայութեամբ Հոգաբարձութեան անդամներու, Ծնողական յանձնախումբին եւ բարերարներու: Պաշտօնական բացումը սկսաւ պատուոյ հիւրին՝ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեանի, վայրերու օրհնութեամբ: Անկէ ետք, վարժարանի տնօրէնուհի տիկ. Լենա Գատեան անդրադարձաւ նոր կահոյքի գնման եւ նորոգութեան աշխատանքներուն: Ծնորհակալութիւն յայտնելէ ետք բոլոր անոնց, որոնք նպաստեցին գրադարանի բարեփոխման տիկ. Գատեան խօսքը փոխանցեց Ծնողական յանձնախումբի նախկին ատենապետուհի տիկ. Լուի Տիմիթեանին:

Տիկ. Տիմիթեան, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց բոլոր ծնողներուն, որոնք ջանք չխնայեցին այս ծրագրի իրականացման, անոնց կարգին յիշելով յատկապէս տիկ. Վերա Եագուկեանի ղեկավարութեամբ գործող խմբակը, որ կազմակերպեց անցեալ տարուան հոյակապ «Zumbathon»-ը, որուն հասոյթը ամբողջութեամբ յատկացուեցաւ գրադարանի նորոգութեան: Տիկ. Տիմիթեան աւելցուց, որ ձեռնարկին յաջողութիւնը արդիւնքն էր բոլոր ծնողներուն մասնակցութեան, ըլլան անոնք Ծնողական յանձնախումբի անդամ թէ ոչ:

Նոր գրադարանին բացման արարողութիւնը փակուեցաւ պատշաճ հիւրասիրութեամբ եւ կարգ մը նուիրատուներու գրադարանի բարեկամներու շրջանակ մը ստեղծելու խոստումով:

HAIG AFARIAN
Cell : 514.862-6779
Bur : 514.360.3000 ext 1234
haig.afarian@gmail.com
Charisma FINANCE
3310 100e Avenue, bureau 350, Laval
Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718

Albert ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker
aarkilanian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

NISSAN CERTIFIÉS HONDA
GABRIEL
Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned
kasadourian@gabriella.com
7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite AZIG Driving School
Tel: 514-336-1110
Moniteur-Instructeur
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant
nat.skaff@gmail.com
Tel. (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7
Services available in Armenian, Arabic, English and French

BRING YOUR OWN WINE
NAZARETH CLASSIC GRILL
550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN 450 682-1644
AUTO SAMSON
MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT
4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

RE/MAX
ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker
C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR MARIE-CLAIRE
CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTREAL ET LAVAL)
2535 de Salaberry, Montréal
Tél: 514.334.7830

Հայուն սեփականությունը պետք է դարձնել Հայ Դատը՝ Հայրենիքի եւ Սփիւոքի մէջ

Այս օրերուն ո՛չ միայն այս վայրին մէջ, այլ նաեւ ամբողջ աշխարհի տարածքին – հայրենիքէն մինչեւ արտերկրի բոլոր գաղութները – հայութիւնը միասնական շարքերով կ'ոգեկոչէ ապրիլեան եղեռնի 102-րդ տարելիցը: Ու չկայ հայ մը, յանձնառու կամ հայութենէն հեռացած, որուն արիւնը փոթորիկներ չստեղծէ իր երակներուն մէջ սա մէկ հատիկ թուականին դիմաց:

Հայ ժողովուրդի պատմութեան մէջ կա՞յ արդեօք թուական մը, որ այնքան արցունք ու սուգ խլած ըլլայ մեզմէ, որքան ապրիլ 24-ը:

Այո՛, երեւակայութեան սահմաններէն անդին ահաբեկի էր Թուրքիոյ կողմէ տրուած հարուածը հայութեան: Հայ ժողովուրդի ամբողջ պատմութեան մեծագոյն դէպքն է անիկա, որ մեզմէ խլած է մարդկային այնքան զոհ ու հողեղէն այնքան հարստութիւն:

Ապրիլեան եղեռնը պարզապէս հանգրուած մըն էր – թէ՛ն մեր պատմութեան ամէնէն ահաւորը եւ ամէնէն մահացուն – Թուրքիոյ կողմէ որդեգրուած այն քաղաքականութեան, որ դարերէ ի վեր կը գործադրէր ան հայ ժողովուրդը ի սպառ ջնջելու եւ Հայաստանը թրքացնելու:

Բայց 102 տարի ետք, այսօր, չկան գաղթականները Եփրատ գետի ափին: Ժամանակի թաւալումին հետ, հայրենի հողէն հեռու, հայրենիքի իրագործումներուն զուգընթաց եւ անոնցմէ անկախ, տարասփռու ժողովուրդը ձեռնարկեց շինարարական աշխատանքի եւ ապրիցաւ վերագործօնք մը:

Ու 102 տարի ետք՝ մենք կա՛նք այսօր: Հայկական հարցը ողջ է ներկայիս:

Մեր ժողովուրդը ոտքի է հիմա իր անկորնչելի իրաւունքները ձեռք բերելու ճամբուն վրայ:

Անցնող 102 տարուան ընթացքին հայութեան կողմէ կատարուած է եւ կը կատարուի հսկայական աշխատանք՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնելու եւ Հայ դատի արդարացիութիւնը ներկայացնելու:

Մինչեւ 1965, այսինքն ապրիլեան եղեռնի յիսնամեակ, մենք մնացած էինք սուգի տրամադրութեան մէջ: 1965-ին մեր ժողովուրդը ինքզինք վերագտնելով՝ մտաւ քաղաքականացման ընթացքին մէջ: Ազահանդէսները փոխարինուեցան պահանջատիրութեան արարքներով:

1965–1975 տասնամեակը կը յատկանշուէր բողոքի ցոյցերով եւ յուշագրերու ներկայացումով:

1975–ին, վաթսուսամեակին, կը պատուէր լուսթեան պատը միջազգային–քաղաքական կեանքին մէջ հայկական հարցին առնչութեամբ, որովհետեւ մեր երիտասարդութիւնը կը վերականգնէր ընտրանքը յեղափոխական պայքարին եւ մեր ժողովուրդը կ'ընթանայ յեղափոխականացման եւ արմատականացման ուղիէն:

Ապրիլեան եղեռնի եօթանասուամեակին եւ յաջորդող տասնամեակին, 1985–ին, հայ ժողովուրդը սկսաւ քաղել պտուղները յեղափոխական արարքներուն: Պետութիւններ, միջազգային կազմակերպութիւններ հետզհետէ կը սկսէին ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը: Այս ժամանակահատուածին կը պայթէր Արցախի ազատամարտը, ինչպէս նաեւ կը վերանկախանար Հայաստանը:

1995–2005 տասնամեակին Հայ դատի ճանաչման հարցը կը սկսի ճեղքէր յառաջացնել Թուրքիոյ կողմէ մեզի դէմ քաշուած պատին: Աւելի՛ն. կը յայտնաբերուին այլախոհ մտաւորականներ, որոնք կը խօսին ջարդերուն մասին: Աւելի՛ն. բռնագրաւեալ հողերու մէջ ջուրի երես կը սկսին գալ խլամացուած եւ թրքացուած հայերը:

2005–2015 տասնամեակին Հայ դատի գրասենեակներ կը հաստատուին հոս–հոն, իսկ 2015–ին, Ապրիլեան եղեռնի դարադարձին, Հայ դատի քարոզչութիւնը իր գազաթնակէտին կը հասնի Հռոմի պապին Յեղասպանութեան ճանաչումով, այլ մանաւանդ կը բերեղանայ Հայ դատի պահանջատիրութեան մտածողութիւնը, որովհետեւ հայկական անկախ պետականութիւնը իր կեցուածքը ամբողջացուց յունուար 2015–ի հռչակագրով:

Այս բոլորը նպաստաւոր երեւոյթներ են անշուշտ, որոնք մեր մէջ ո՛չ միայն կը յառաջացնեն անխառն գոհունակութիւն, այլեւ յուսատու հանգրուանի մը դիմաց կը դնեն ամբողջ հայութիւնը: Այս բոլորը կ'ուռեցնեն մեր սիրտերը, որովհետեւ ամէն բանէ առաջ մենք պէտք ունինք ազգային հպարտութեան:

Սակայն չի բաւեր գոհանալ ձեռք բերուած արդիւնքներով:

Դեռ ճամբայ ունինք կտրելիք շատ: Թշնամի ճակատին վրայ, անցնող բոլոր տասնամ-

եակներուն, օր չեղաւ, որ թրքական պետութիւնը, թրքական մամուլը եւ ընկերային հաղորդակցութեան բոլոր միջոցները չանդրադառնան գլխացաւանք պատճառող Հայկական հարցին: Թուրքիա սեմինարներ, դասախօսութիւններ եւ համագումարներ կազմակերպեց ներքին եւ արտաքին ճակատներու վրայ՝ Հայկական հարցը սեւցնելու, խեղաթիւրելու եւ այլ ուղղութիւններու առաջնորդելու նպատակով: Թրքական պետութիւնը իր նախագահով, վարչապետով եւ արտաքին գործոց նախարարով ուղղեց սպառնալիքներ եւ ուժաւորեց հայկական հաստատութիւններ ու շրջաններ Սուրիոյ մէջ:

Հիմա, 102-րդ տարելիցն է Ապրիլեան եղեռնի: Ու կը հաստատենք, որ դիւրին չէ Հայ դատի հետապնդումը: Հայ ժողովուրդի պատմութեան ո՞ր հանգրուանը դիւրին եղած է արդեօք: Յետոյ ազատագրական պայքար մղող ո՞ր ժողովուրդը դիւրութեամբ մղած է իր պայքարը:

Ահա այս վիճակն է, որ հողին վրայ կը պահէ կամ հողին տակ կ'անցնէ որեւէ դատ:

Թուրքիա ձեռնածալ չէ նստած երբեք: Յեղասպանութիւնը ուրանալու յարատեւ գործունէութեան իր սկզբունքներուն մէջ, Թուրքիա ոգի ի բռին կ'աշխատի ապահովել իր կովկասեան ազդեցութեան գոտին, կ'ամրապնդէ իր կապը Կեդրոնական Ասիոյ հետ եւ այդ բոլորին մէջ իր քաղաքականութեան կ'ուզէ ենթարկել Հայաստանը:

Միջազգային քաղաքական աշխարհին համար այսօր Հայ դատ մը գոյութիւն չունի պաշտօնապէս: Պետութիւններ եւ միջազգային կազմակերպութիւններ անպաշտօն կերպով կրնան համակարծիք ըլլալ մեզի, թէ հայ ժողովուրդը եւս իրաւունք ունի տիրանալու իր դարաւոր հողերուն եւ արդարութիւն պէտք է ընել հայրենի, սակայն անոնք կ'աւելցնեն՝ հաստատելով, որ հաւասարակշռութիւն մը գոյութիւն ունի, որ պէտք է պահպանել՝ իրենց շահերը ապահովելու համար: Եւ որովհետեւ հայութեան որեւէ շահ չեն կրնար ունենալ, ուրեմն պաշտօնապէս զօրավիզ չեն կանգնիր Հայ դատին:

Հայկական հարց գոյութիւն ունի սկզբունքներու եւ իրաւունքներու գետնի վրայ՝ մարդկային իրաւանց սահմանումով իսկ, որ կատարուած է 1948-ի ՄԱԿ-ի Ուլխտին մէջ: Սակայն իրաւունքներու սկզբունքային հարցը ուրիշ բան է, իսկ անոնց իրականացումը՝ ուրիշ: Մէկը գաղափար է եւ ապա ընդունելի, այնքան ատեն որ իրեն զաղափար կը ներկայանայ. միւսը իրականացնելիք քաղաքական աքթ է, որ կրնայ շատ զոհողութիւններ պահանջել, կրնայ վնասաբեր ըլլալ այս կամ այն երկրի շահերուն, ուստի տրամադիր չեն ըլլար այդ զոհողութիւնները ընելու, այդ վնասներուն ենթարկուելու, յանուն սկզբունքի, իրաւունքի եւ յանուն մարդկային արդարութեան:

Եթէ արտաքին գետնի վրայ լուծութիւն կը պահուի Հայ դատի նկատմամբ, ատիկա ոչինչով պէտք է տկարացնէ հայ ժողովուրդը, որ զօրացնէ ազգային–քաղաքական դատին իրաւական հիմքը: Պայմաններուն աննպաստ ըլլալը չի կրնար պատճառ ըլլալ, որ ազգը իր իրաւունքները չհետապնդէ:

Հայ դատի բարեւոք լուծումը դուրսէն պիտի չգայ: Հայ դատը, ամէն բանէ առաջ, Հայոց դատն է, մեր հարցն է: Իսկ անոր լուծումը դուրսը պիտի չփնտռենք: Հայ դատի լուծումը կը գտնուի մե՛ր մէջ: Որքան որ կարեւոր է արտաքին ճակատը, բազմապատիկ նշանակութիւն ունի ներքին ճակատը, ներքին ճակատին ամրապնդումը:

Անմահ Քրիստափոր մեծ աշխատանք կատարեց Եւրոպայի մէջ հայանպաստ շարժում յառաջացնելով: Հակառակ ասոր, ան շատ լաւ գիտէր եւ յաճախ կ'ըսէր իր շրջապատին, որ արտաքին քարոզչութիւնը չէ ճամբան հայ ժողովուրդի փրկութեան, ասիկա լոկ անհրաժեշտ աշխատանք է, բայց բուն գործը՝ ինք ազատագրուող ազգը պէտք է կատարէր եւ ատոր համար բուն քարոզչութիւնը ժողովուրդին մէջ պէտք է կատարուի, որպէսզի ընդգրկուի եւ խիզախութեան ճամբան բռնէ:

Այո՛, հայո՛ւն պէտք է ճանչցնել հայը:

Հայո՛ւն սեփականութիւնը պէտք է դարձնել Հայ դատը՝ հայրենիքի եւ սփիւոքի մէջ:

Հայ դատը հողային պահանջատիրութիւն է ամէն բանէ առաջ: Եթէ միայն Սեւրի դաշնագիրը առնենք իրբեւ հիմք, այն ատեն պէտք է ըսել, թէ մեզի խոստացուած շուրջ 161.000 քառ. քիլոմետրին 112.000 քառ. քիլոմետրը, այսինքն եօթը–տասներորդը բռնագրաւուած է Թուրքիոյ կողմէ:

Պէտք է լա՛ւ ճանչնալ թուրքը:

Թրքական պետութիւնը ուժի տեսութեան վրայ կը բանաձեւէ իր արտաքին քաղաքականութիւնը: Այդ ուժին կարելի է դէմ դնել մեր ներուժով, ազգային–ներքին ճակատը զօրացնելով: 1960–ական թուականներուն Վիեթնամի յեղափոխութեան յաջողութեան գլխաւոր գրաւականներէն մէկը կայացաւ այն իրողութեան մէջ, որ վիեթնամացի յեղափոխականները յաջողեցան քաղաքական երկարամեայ շարժունութեան մէջ պահել Վիեթնամի տանջուող ժողովուրդին մեծ մասը: Օտար հսկայ զօրքերուն դիմաց Վիեթնամը մեծ յաղթանակ տարաւ ներքին ուժով միայն:

Մենք գործ ունինք պետութեան մը հետ, որ զօրաւոր է թէ՛ քաղաքական, եւ թէ՛ գինուորական իմաստով:

Մենք գործ ունինք պետութեան մը հետ, որուն բնակչութիւնը կը հաշուէ աւելի քան ութսուն միլիոն:

Շատեր կը մտածեն, որ մեծ ձուկը պզտիկ ձուկը կ'ուտէ: Ասիկա ճիշդ է բնութեան մէջ, անասուններու պարագային, բայց ի զօրու չէ մարդոց պարագային: Մի՛տքն է, մարդկային ուղե՛ղն է, որ կը յաղթէ զէնքին ու թիւին:

Մենք երկմտանքներ չունինք եւ պէտք չէ որ ունենանք: Եւ որքան սաստկանան Թուրքիոյ կողմէ հակահայ աշխատանքները, նոյնքան եւ աւելի պէտք է խորանան մեր հաւատքն ու աշխատանքը Հայ դատի առնչութեամբ: Ասիկա կը պահանջէ մարդկային պատմութեան տրամաբանութիւնը:

Ո՛չ քաղաքական ամուր կռուանները, ո՛չ գինուորական–ուզմական ուժը, ոչ ալ բնակչութեան մեծամթիւ ըլլալը կրնան վախցնել ժողովուրդ մը եւ յուսահատութեան տանիլ գայն, այնքան ատեն որ յաղթանակները կը տարուին նախ հոգիներուն մէջ, ապա միայն կեանքի կու գան: Գարեգին Նժդէհ կը հաստատէ, որ վաղը պիտի յաղթէ ան, որ մինչ այդ վաղը իր հոգիին մէջ կը տանի յաղթանակը:

Բոլո՛ր ժամանակներուն Թուրքիոյ դէմ մեր պայքարը երբեք չէ եղած հաւասարէ հաւասար: Հիմա ալ անհաւասար ուժով կը ճակատենք Թուրքիոյ դէմ: Ապրիլեան եղեռնի հարիւրամեակը, ինչպէս նաեւ անցեալ տարուան Արցախի քառօրեայ պատերազմը յուսատու հանգրուանի մը ազդանշանը տուին ներքին ճակատի վրայ, յատկապէս միասնականութեան մարզին մէջ: Մեր պատմութեան ընթացքին արձանագրուած ողբերգութիւններուն մէջ բախտորոշ դեր ունեցած են մեր ժողովուրդին մէջ գոյութիւն ունեցող պառակտումն ու անմիաբանութիւնը, որոնք իրապէս եղած են աղէտալի: Մենք յաղթած ենք այնտեղ, ուր միասնակաւ եղած ենք, եւ պարտուած ենք այնտեղ, ուր պառակտուած ենք: Միասնակամութիւնը թէ՛ գիտակցութեան եւ թէ՛ վարժութեան հարց է: Ա՛ն է, որ միացեալ կարելիութիւններով պիտի դիմաւորէ նոր ապագան:

Ահա այդ ճամբուն վրայ անհրաժեշտ է յստակօրէն դանազանել մեր ուզմամբարութեան հիմնական նպատակները՝ երկրորդական նշանակութիւն ունեցող հարցերէն եւ մանրամասնութիւններէն:

Նոր պատմութիւնը կը սպասէ մեզի:

Նոր պատմութիւնը կը սպասէ ձեզի, երիտասարդներ եւ երիտասարդուհիներ:

Երկրորդ Աշխարհամարտի աւարտին, Ճափոնը ըսաւ. «Մենք պարտուեցանք, որովհետեւ մեր դիմացիները աւելի մեծ միջոցներ ունէին, քան մենք: Այլեւս իրաւունք չունինք տկար ըլլալու: Պէտք է զօրանանք»:

1945–ին շատ քիչ ժամանակ ետք Ճափոնը կը հանդիսանար աշխարհի երրորդ ճարտարարուեստականացած երկիրը:

Նոր պատմութիւնը կը սպասէ մեզի:

Նոր պատմութիւնը կը սպասէ ձեզի՛, երիտասարդներ եւ երիտասարդուհիներ:

Մեր կարգին, մենք կ'ըսենք.

«Մեր արդար իրաւունքները ոտնակոխուած են, որովհետեւ մեր դիմացիները աւելի մեծ միջոցներ ունէին, քան մենք: Այլեւս իրաւունք չունինք տկար ըլլալու: Պէտք է զօրանանք»:

Պիտի զօրանանք անկեղծ գինուորի հաստատ ու խրոխտ քայլերով եւ ընթանանք այն ուղիէն, որ զծուած է Քրիստափորի «յարատեւ կռիւ»-ով:

Յարատեւ կռիւ, մինչեւ որ Հայաստանը միանայ Արարտի երկու փէշերուն վրայ, ուր համախառն հայութիւնը ամբողջ, ազատ եւ անկախ:

taste the difference



B
BEIRUTI

155 CONSUMERS ROAD, TORONTO, ON M2J 0A3
416 491-2227 | WWW.BEIRUTI.CA

ARMENIAN HERITAGE CRUISE®

JANUARY 20-28, 2018 - 8 NIGHT CRUISE!

- St. Kitts • Antigua
- Puerto Rico • Labadee

You must book with TravelGroup in order to attend our private Armenian parties!



INSIDE CABIN	\$1044
PROMENADE INSIDE	\$1094
OCEAN VIEW	\$1234
DELUXE BALCONY	\$1524
SUPERIOR BALCONY	\$1574

SUITES available upon request

3rd or 4th adult or child over 11 years old sharing same cabin \$730
Children 11 years old and younger \$430

ALL RATES* are per person, double occupancy. *Government tax of \$108.36 per person is additional. Prices include all port charges and A/C/A. Registration fee. Deposit of \$250 per person due upon booking. Cruise is fully refundable until June 1, 2017. Taxes and information subject to change at any time without notice.

For Reservations Contact:
Local 561-147-0750
Toll Free 1-866-447-0750 Ext 108 or 102
125 SE Mizner Blvd., Suite 14
Boca Raton, FL 33432
AHC@travelgroupint.com



SIBIL

HAROUT PAMBOUKJIAN



AKH'TAMAR DANCE ENSEMBLE



Call Arpi Ashkarian (Canada) (519) 748-2672

CAMP D'ÉTÉ ARARAT
ԱՐԱՐԱՏ ՃԱՄԱՐԱՐ

Յունիս 27-Էն 30 2017

«ՓՈՐՁԱՌՈՎԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՐԱԳԻՐ»

Ճշդուած թիրախ՝
15 տարեկան պատանիները

ԱՍԱՌՆԱՅԻՆ «ԱՐԱՐԱՏ» ՃԱՄԱՐԱՐԵՆԵՐՍ

ՊՏՈՅՏՆԵՐ
Չորեքշաբթի, Յունիս 28, 2017 - Amaze
Հինգշաբթի, Յունիս 29, 2017 - Cap St-Jacques

Մասնակցութեան սակ՝ **150.00\$**

Մանրամասնութեանց համար այցելել՝

www.campdetesourphagop.com

Մտերմ ծովոր մեղեկացե՛ք Կամպետեսուրփագոյի «Արարատ Ճամբար»
Camp d'été Ararat
Lieu: L'École Arménienne Sourp Hagop, 3400 Rue Nadon, MtL Qc H4J 1P5

Յանիսնային արձանագրութեան քաղաք/ Période de pré-inscription: 3 février au 5 mai 2017
Արձանագրութեան քաղաք/ Période d'inscription: 6 mai au 3 août 2017

	Semaine 1 27 au 30 juin	Semaine 2 3 au 7 juillet	Semaine 3 10 au 14 juillet	Semaine 4 17 au 21 juillet	Semaine 5 24 au 28 juillet	Semaine 6 31 juillet au 4 août	Semaine 7 7 au 11 août
Երախմբային սակ/ Frais de participation (110.00\$ de rabais durant la période de pré-inscription)	\$150.00\$	\$150.00\$	\$150.00\$	\$150.00\$	\$150.00\$	\$150.00\$	\$150.00\$
Պայթիւթիւն/ Activités et Sorties	*Zoo de Granby (M) & Cap St- Jacques (J)	*LaRonde et Action Directe (Me) & Centre de sciences (J)	*M55 (Mo) & Parc Ouverte (M) & Sportifs Cage (J)	Plage St Timothée (Me) & Arbraska et Cache à l'eau (J)	Acrosport Baroni (Mo) & Atrium 1000 (J)	Beach Club (Mo) & SOS Labyrinthe et Boulevard (J)	*LaRonde et Funtopolis (Me) & Arbraska et Château du Cirque (J) & Spectacle Annuel (V)
Բնակարանային արձանագրութիւն/ Service d'autobus	30.00\$ քաղաքային/ par semaine						
Երեւոյն պահպանում/ Service de garde	De 16h00 à 18h00: 30.00\$ քաղաքային/ par semaine Լինիս 7.00\$ քաղաքային/ par jour						

* Խաղաքային օրը՝ յայտնաբերուած օրը, _____ Խաղաքային/ քաղաքային

Courriel: camp.ararat@campdetesourphagop.com

Siteweb/ COBA: www.campdetesourphagop.com



Under the Auspices of
His Eminence Archbishop Papken Tcharian
Prelate of Canada

North America Youth Gathering

Uturn

ages 16 through 35

GET INVOLVED &
MAKE A DIFFERENCE



CAMP IAWAH, Kingston Ontario
June 9-10-11, 2017

80\$ Registration fee
(All included)

Buses leave on Friday 6PM
Returning on Sunday 9PM

Registration before May 29, 2017 at your local church offices or:

Montreal / Laval 514 856-1200 (Prelacy Office)
Toronto 647 838-0097
Cambridge 519 623-6372
Vancouver 604 626-9627

ANI

Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

LOOKING FOR FULL TIME CHEF TO GRILL



www.aniristorante.ca

Fine Dining
Catering
Party Room
BOOKING TO GO TOP 2

Golf 2017

Fondation
Centre de cancérologie
Charles-Bruneau

**SERVICES ET ACTIVITÉS
COMMUNAUTAIRES MANTAGOUNI**

Ս. ԳԵՈՐԳ ԼԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

**5ème
TOURNOI DE GOLF
ANNUEL BÉNÉFICE**

LE 15 JUIN 2017
CLUB DE GOLF STE-ROSE

LES BÉNÉFICES Iront À LA
"FONDATION Centre de cancérologie **Charles-Bruneau**
LA COMMUNAUTÉ ARMÉNIENNE **SOURP KEVORK**
SERVICES ET ACTIVITÉS COMMUNAUTAIRES **MANTAGOUNI**

Pour réservations Mosig Topouzian 450-688-6795 mosig@sourpkevork.ca

Իւրաքանչիւր
Գիրք

**Միայն
20\$**

- Ին Առաջին Աստուածաշունչս
- ՆԱՐԵԿ
- Պատահիլն Աստուածաշունչը

Կարկի Լ զնկ
Առաջնորդարանի Գրախանութիւն

514-856-1200
prelacyarmenianprelacy.ca

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ Միլիոն Կարօնք

Մեր երկնքին վրայ այժմ փայլող աստղերէն մէկն է Կարօ Փայլան՝ մեր երիտասարդ հայրենակիրը, որ Թուրքիոյ խորհրդարանի անդամ է իբր ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան պատգամաւոր եւ որուն այցելութիւնը վայելեց Գանատայի հայութիւնը վերջերս:

Երկուշաբթի՝ մայիս մէկի երեկոյեան, Մոնթրէալի մէջ, ինչպէս նախորդ օրը՝ Թորոնթոյի, հազարաւոր հայեր պատասխանեցին կազմակերպիչ միացեալ մարմիններու հրահրին ու եկան խուռնեւրամ լեցուցին, յորհեցուցին մեր սրահները, որոնք կարծես բաւարար չէին նման հսկայ գանգուածներ պատշաճօրէն ընդունելու համար. ինչն էլ չէր մտածուած աւելի մեծ ու յարմար սրահ վարձելու մասին: Շատեր դուրս մնացին, մէկն ալ այս տողերը գրողը, սակայն շնորհիւ առձեռն սարքերու եւ այդ սարքերուն վրայ տեղւոյն վրայ հեռափոխուող նախաձեռնութիւնը ունեցող տղոց, ես ալ, բազմահազար ուրիշներու նման, կարելիութիւնը ունեցայ հետեւելու ձեռնարկի թաւալումին: Ասիկա սակայն երկրորդական հարց մըն է, ու կազմակերպիչները յաջորդ անգամ աւելի պատրաստուած ըլլալու են:

Կարեւորը Կարօ Փայլան երեկոյթն է ու մեր հասարակութեան ցոյց տուած ջերմ ընդունելութիւնն է, սէրն ու յարգանքը իր այս յանդուգն գաւկիին նկատմամբ: Չեմ անդրադառնար մնացեալին որ թղթակցութեան, հաղորդումներու թէ ընկերային ցանցերու ճամբով հրապարակուեցաւ, տարածուեցաւ: Կ'ուզեմ սակայն վեր առնել մէկ կէտ, որ այդ օր աւելիով ցայտուն դարձուց այս հայորդիին արժանիքները:

Մոնթրէալի հաւաքին վերջաւորութեան, ուրիշ Կարօ մը, վերջին հարցում մը ուղղելով Փայլան Կարօյին, հարցուց, թէ տակաւին քանի՞ Կարօ կրնայ գալ իր ետեւէն, այսինքն ուրիշ քանի՞նք կրնան իրեն նման սառնասիրտ կերպով իրենց կեանքն ալ վրայ տալու պատրաստակամութեամբ հրապարակ գալ ի պաշտպանութիւն մեր իրաւունքներուն: Հարցումը ծափեր յառաջացուց: Պատասխանը՝ աւելի:

Փայլան ինչպէս ու առանց պահ մը երկմտելու անվարան յայտարարեց.

— Միլիոն Կարօներ, մի՛ մտահոգուի: Այդ մի քանի բառը ամբողջ երեկոյթը կ'արժէր ու կ'իմաստաւորէր: Արդարեւ, Զոհրապետներու եւ Վարդգէսներու շառուիղ այս երեսփոխանը շատ բան բռնած եղաւ այդքան քիչ բառերով, շատ աւելի քան իր տեղեկատուական ամբողջ կոյտի ընթացքին: Այլեւ շատ բան բացայայտեց ինքն իր մասին:

— Միլիոն Կարօներ... Այսպիսով ան ինքզինք գերադաս չնկատեց իր սերունդի միւս ներկայացուցիչներէն, այլեւ ընդհանրապէս իր ժողովուրդէն, համաստեղութեան ազուր դաս մը տալով բոլորիս:

Այո, վաղը ինքն ալ կրնայ դաւադրութեան մը գոհ երթալ, ինչպէս պատահեցաւ իրմէ առաջ ուրիշ քաջորդիի մը՝ Հրանդ Տինքի, բայց պիտի գան իրմէ ետք ուրիշ հայ տղաք ու աղջիկներ, տեւաբա՛ր պիտի գան, շարք առ շարք պիտի գան ու շարունակեն պայքարը, պայքարը յանուն արժանավայել կեանքի, պայքարը յանուն ժողովուրդներու իրարահաւասար իրաւունքներուն, յանուն հայութեան եւ բոլոր ազգութիւններուն այս արեւին տակ ազատ ապրելու իրաւունքին:

— Միլիոն Կարօներ: Սա անխախտ հաւատքն է, որ իր ժողովուրդի ծոցէն մի՛շտ պիտի ծնին Կարօներ, ինչպէս մի՛շտ ծնած են Կարօներ, երբ Կարօներու կարիքն ենք զգացած: Այսինքն՝ տե՛ւաբար:

Սա Փայլանի հաւաքական գիտակցութեան ապացոյցն է, որովհետեւ ան գիտէ, թէ որքան ալ անվախ ըլլայ, խրոխտ ու համարձակ, ի վերջոյ մէկ հոգի է ինք, սակայն իր ուժը իր հաւաքականութիւնն է, իր ժողովուրդն է, ու անոր հաւաքական ուժովն է, որ ինք կ'ըլլայ ինչ որ է, կրնայ խօսիլ ու գործել ինչպէս կը խօսի ու կը գործէ: Ինք ոչինչ կրնայ ըսել եւ ընել, ինք ոչինչ կ'ըլլայ եթէ չգիտակցի որ ունի՝ իր ետին իրեն զօրավիզ այդ հաւաքականութիւնը: Իսկ սրահները, որ իր ներկայութեան իրենց պատերէն դուրս յորհեցան, ահա այդ հաւաքական ուժին արտայայտութիւնն էին, ապացոյցը, աղբիւրը իր ներշնչումին:

Այդ գիտակցութիւնն ու ինքնագիտակցութիւնը, նոյնիսկ ենթագիտակցութիւնն են, որ հերոսներ կը ծնին, անոնք ըլլան ջան ֆէտայի, վրիժառու բազուկ թէ Կարօ Փայլանի նման խաղաղ միջոցներով, ժողովրդավարութեան ճամբով մեր իրաւունքներու պաշտպանութեան նուիրուած տղաք, որոնք պատրաստ են պատնէջներուն վրայ մնալու մինչեւ յաղթանակ, մինչեւ մահ ի հարկին, այլեւ դրօշը փոխանցելու իրենց յաջորդներուն, որ անոնք ալ շարունակեն պայքարը մինչեւ յաղթանակ:

— Միլիոն Կարօներ: Անշուշտ միլիոն Կարօներ, չէ՞ որ ի վերջոյ բոլորս ալ Կարօներ ենք Արցախի խրամատներուն մէջ թէ Սփիւռքի՛, պայքարի բոլոր ճակատներուն վրայ, իւրաքանչիւրս ի՛ր դաշտին մէջ, ի՛ր համայնքին մէջ, ի՛ր գործին գլուխը՝ ի՛ր կուսակցութեան, միութեան, հաստատութեան ճամբով՝ մշակոյթի, կրթութեան, ընկերային թէ կրօնական ծառայութեան, գիր ու գրականութեան թէ մարմնամարզի ու երիտասարդութեան դաստիարակութեան ոլորտներուն մէջ կամ այլապէս:

Կարօ Փայլաններ չե՞ն ի վերջոյ բոլոր անոնք, որ չեն համակերպիլ մեր ժողովուրդին պարտադրուած ճակատագրին, կը մերժեն որ ան գրկուի իր սեփական հայրենիքին մէջ ազատ, անկախ ու համախումբ ապրելու եւ ստեղծագործելու անբռնաբարելի իրաւունքէն ու յաղթահարելով ամեն դժուարութիւն, խուսափելով ամեն ծուղակէ, յանձն առնելով ամեն զոհողութիւն, դիմադրելով ամեն այլ հրապոյրի՝ այս հեռաստաններուն մէջ փոքրիկ Հայաստաններ կը ստեղծեն, հա՛յ կը մեծցնեն իրենց զաւակները, հայկական վարժարան կ'ուղարկեն, հայ կեանքին կ'առնչեն, հայու ինքնութիւնն ու արժանապատուութիւնն կը ներարկեն, որպէսզի անոնք ալ շարունակեն նոյնը ընել իրենց զաւակներուն պարագային, եւ այսպէս շարունակ մինչեւ...
Այո, սա շարունակական ու դարաւոր պայքար է, որ դեռ պիտի սաստկանա՛յ, որպէսզի ո՛չ ըսենք, կարենա՛նք ոչ ըսել: Ոչ՝ անէացման, անհետացման:
Նոյնը չէ՞, որ այս մէկ հատիկ Կարօն ալ կ'ընէ:

Միլիոն ենք, այո՛, սիրելի՛ Կարօ:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

 Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը / Visit our new website www.arsarmenianschool.ca

 **ՀՕՄ-ի Մոնթրէալի ընկերային ծառայութեան գրասենեակը կ'աջակցի Գանատա ներգաղթած սուրիահայերուն**

ՀՕՄ-ի Մոնթրէալի Ընկերային Ծառայութեան գրասենեակի հիմնական առաքելութիւնը Մեծն Մոնթրէալի հայութեան ընկերային կարիքներուն հասնիլն է, շեշտը դնելով կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու վրայ: Իսկ վերջին շրջանին մեծ աշխատանք կը տարուի Գանատա նորահաստատ սուրիահայ ընտանիքներուն օգտակար հանդիսանալու համար: Մեր գործունեութիւնը կ'ընդգրկէ տեղեկատուութիւն, ներգաղթողներու աջակցութիւն, տարեցներու եւ կարիքաւորներու օժանդակութիւն.


- Կ'օգնենք դիմացնելու անոնց համարկումը (intégration) եւ երկրի օրէնքներուն, սովորութիւններուն եւ քաղաքացիական իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն ծանօթացումը:
- Կ'ամբողջացնենք կառավարական փաստաթուղթերը դաշնակցային եւ նահանգային մակարդակներու վրայ: Allocation familiale, crédit d'impôt pour les nouveaux arrivants:
- Նորեկները կ'արձանագրենք ֆրանսերէնի դասընթացներու:
- Կ'ընկերակցենք զանազան ժամադրութիւններու եւ կը միջամտենք աշխատանք գտնելու կապակցութեամբ:
- Նոր ժամանած եւ տակաւին նոր հաստատուող ընտանիքներուն կը տրամադրենք խոհանոցային իրեր:
- La Corbeille գանատական բարեսիրական կազմակերպութեան հետ յատուկ համաձայնութեամբ գեղջուած գիներով ուտեստեղէն կ'ապահովենք կարիքաւոր ընտանիքներուն:

Հիմնադրութի օրերը ժամը 12:00ԷՍ - 4:00
Հասցէ՝ 3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5
Հեռաձայն՝ 514 514-335-2222

ՀՈՐԻԶՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ 2017

Միացէ՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտոյտին, որպէսզի Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մէջ, Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը

Մանրամասնութիւնները կարդալ ծանուցումներու ներդիրին մէջ



Քարին Վրայ Շուշիի ազատագրման 25-ամեակ

1988-ին ծայր տուճակ Արցախի հայտնական ինքնորոշման պայքարը: Ազգայնական հակադարձեց, եւ Շուշիի դիրքը դարձաւ փորձանք Ստեփանակերտի գլխուն: Ազգայնականական գործը իր «կրատ» հրթիռներով անխնայ հարուածեց Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքը եւ շրջակայքը՝ պատճառելով գոհեր, դժուարացնելով հասարակական կեանքը, քանդելով տնտեսութիւնը ու արդիւնաբերական ազատագրութեան գործընթացը:

Լեռնային Ղարաբաղի իշխանութեան եւ նորակազմ բանակի հրամանատարութեան համար կենսական կարեւորութիւն ունէր ազգայնական գիտելիք ու թերութիւնները: Որոշուեցաւ ազատագրել Շուշին, եւ յարձակումի ժամկէտ ճշգրտեցաւ 1992 մայիսի 8-ը: Արձանագրեց, որ նոյն օրը իրանեան իշխանութիւնները, շրջանցելով Մոսկուան, կազմակերպած էին շրջանային խաղաղութեան ձգտող եռակողմ հանդիպում մը Թեհրանի մէջ Հայաստանի նախագահին, Ազգայնականի նախագահի պաշտօնակատարին եւ Իրանի նախագահին միջեւ՝ քննելու համար համարատուութեան լուծումի կարելիութիւնը:

Մայիս 8-ի առաւօտեան շուրջ ժամը մէկին բարձրացանք դէպի Շուշիի հանդիպակաց բլուրները: Մութ գիշեր էր, թէեւ ամպերուն վրայ լոյսերու ցոլացումը կու տար մթնշաղի տպաւորութիւն:

Բանակի հրամանատարութեան գաղտնապահութեան մասին հրահանգը կ'արդիւնէր լուսաւորութիւնը եւ աղմուկը, հետեւաբար, Վաղոն չէր միացուցած լոյ-

սերը, որոշ բարձունքի մը հասնելէ ետք ան անջատած էր նաեւ շարժիչը: Մեր ինքնաշարժը դադարած էր մեքենայ ըլլալէ եւ անշուշտ նաեւ կը սահէր ճանապարհն ի վար, լարուած լուսութեան մէջ:

Յանկա՛րձ աղին՝ հսկայ շուքեր: Ծամբուն եզրին երեւցան բազմաթիւ հրասայլեր եւ փոխադրակառքեր, երկնքի կիսամութ պատուով Վրայ ուրուագծուող զրահապատ մեքենաները կը սպասէին յարձակման հրամանին: Տնցիչ էր դարանակալ շարասիւնին յայտնութիւնը, հայոց լուռ եւ գուսպ յարուածին կ'առթէր ահ եւ հպարտութիւն:

Անցանք անդին, բարձրացանք Շուշիի հանդիպակաց բլուր մը, քաղցրով մօտեցանք գագաթին եւ նայեցանք դէպի Շուշի, տեսնք միայն մութ մթնշաղէն տարբերող անյստակ գանգուած մը: Ժամը առաւօտեան 2:00-ն էր:

Գոռաց հայկական հրետանին: Եւ Շուշիի լուսաւորութեան:

Յաջողող քանի մը ժամերուն թնդանողները կրակեցին գրեթէ անդադար, Շուշի անընդմէջ փայլատակեց հրդեհներու պոռթկումով: Հորիզոնը բռնկած էր, յափշտակուած կը դիտէինք քաղաքին բոցավառ քանդում-վերածնունդը, բառ չկար արտայայտելու գոյութեան վայրկեանը, կարելի էր միայն վկայել պատմական շրջադարձը:

Առաւօտեան դէմ քեցիք դէպի այն բլուրը, ուր տեղակայուած էին բանակի հրամանատար՝ «Կոմանտոս»-ը, գնդապետ Արկադի Տէր Թադեւոսեանը եւ իր ռազմական շտապը: Նախագահի պաշտօնակատար Գէորգի Պետրոսեանը միացաւ հրամանատարական կազմին, Վաղոն եւ ես մնացինք քիչ մը հեռու:

Ժամը 7:00-ի շուրջ ումբակոծումը մեղմացաւ. զրահապատ ուժերուն եւ հետեւակ միաւորներուն հրաման տրուեցաւ շարժելու առաջ եւ դարձգարձիկ ոլորաններէն բարձրանալու դէպի Շուշի:

Վաղոն մեզի տարաւ նոյն ուղղութեամբ: Դէպի Շուշի տանող ճամբուն մօտաւորապէս կիսուն, ճամբեզրին կար ապակիներու գործարան մը, ուր կանգ առինք: Ժամը 8:00-ի մօտերը դէպի Շուշի բարձրացող հետեւակ զօրասիւն մը եւ զրահակառքեր կանգնեցան գործարանին մուտքին: Այդ պահուն է, որ հեռատեսիլի նկարահանող Գագոն գիտուորները նկարած ժամանակ մեզի եւս առաւ իր ոսպնեակին մէջ: Կարճ հանգիստէ մը ետք զօրասիւնը շարունակեց իր երթը դէպի Շուշի:

Կրակոցները եւ պայթիւնները անկանոն կերպով շարունակուեցան մինչեւ կէսօրէ ետք ժամը 1:00, երբ լուր տուին, որ ազգայնականական ուժերը լքած են Շուշին: Իջանք Ստեփանակերտ. կարճ ժամանակ ետք Ազգային ժողովի անդամներու եւ Արցախի թեմի առաջնորդ Պարզեւ սրբազան Մարտիրոսեանին հետ վերստին բարձրացանք դէպի Շուշի:

Շուշիի մուտքին հայկական դերձմանոցին տեղահանուած կամ քանդուած դերձմանաքարերը պատմեցին ազգայնական մոլեգնութեան մասին, բերդին մուտքին ինկած ազերի զինուորի մը դիակը, ածխացած շէնքերը եւ Ս. Ամենափրկիչ եկեղեցիին գաւիթին մէջ տեղադրուած ազգայնական հրթիռներու արկերը հաստատեցին թէ՛ կռիւր, իսկ եկեղեցիին խորանին առջեւ սրբազանին առաջնորդութեամբ կատարուած «Հայր մեր»-ը վկայեց հայոց յաղթանակը եւ Շուշիի ազատագրումը: Մայիսի 8:00-ն էր, մօտաւորապէս ժամը 3:00:

Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնները յայտարարեցին, որ Շուշիի ազատագրումի պաշտօնական օրը մայիսի 9-ն է: Այդպէս թող ըլլայ, բայց կը հաւատամ, որ ամէն տարի մայիսի 8-ին շնորհակալ «Հայր մեր»-ը կ'արձագանգէ Ս. Ամենափրկիչի խորանէն:

Շուշիի ազատագրուած է: Այլեւս կարելի է մօտենալ Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր՝ Արամ Մանուկեանի յաճախած թեմական դպրոցին պատին. լերան եզերքէն դէպի վար նայելով կարելի է երեւակայել ձորին խորը ծուրած Բարին Տակ դիւղին հերոսական դիմադրութիւնը ազգայնական յարձակումներուն. կարելի է նաեւ վերադառնալ Ս. Ամենափրկիչ եկեղեցի եւ խնկացող պատարագի կըռոյթով խորհրդածել ազատութեան եւ անհատական ու հաւաքական արժանապատիւ վերապրումի մասին:

Բայց, եկէք բարձրանանք քարին վրայ, դէպի Շուշիի ամենաբարձր կէտը, ուր կանգնած է հեռուստացոյցի հեռարձակումի աշտարակը, մազլինք ժայռերէն վեր եւ դիմեք չորս ուղղութիւններուն:

Դէպի արեւմուտք Զանգեզուրի եւ Գեղամայ լեռներն են՝ Արարատի թիկնապահները:

Դէպի արեւելք՝ Պաքու տանող դաշտավայրերը եւ Կասպից ծովու նաւթահորերը:

Դէպի հիւսիս պիտի տեսնենք մշուշին մէջ ուրուագծուող էլպրուզի գագա-

թը. Արարատէն արեւելք բարձր այս լեռը նստած է Ռուսիոյ հարաւային սահմանին:

Դէպի Իրան՝ հազիւ թէ երեւցող լեռնաշղթան կը կոչուի Ալպորդ. ան կ'եզերէ Կասպից ծովուն հարաւը, անոր Դամաւենտ գագաթը եւս Արարատէն բարձր է:

Երկու հսկայ լեռները, Արարատը եւ հայկական լեռնաշխարհը կը գրկեն Կովկասը. տարածաշրջանը կը յենի երեք գագաթներու, ռազմաքաղաքական երեք տարբեր սիւներու վրայ: Շուշին կը գտնուի այդ բեւեռներուն ուժային հաստարակընթեան խաչմերուկին վրայ: Հայոց քարին կշիռը ծանր է:

Շուշին եւ ազատագրուած տարածքը կը ներկայանան իբրեւ հայ ազգային ռազմավարութեան հիմքը եւ հայոց քաղաքական կամքին բեմը: Այս իրողութիւնը հայութեան համար պիտի ունենայ բացարձակ արժէք:

2016 ապրիլի քառօրեայ պատերազմէն ետք աշխուժացան միջամտութիւնները եւ բազմացան ճշգրտումները ի խնդիր Հայաստանի կողմէ դիրքային գիշտումներու՝ ընդդէմ Արցախի կարգավիճակին մասին ազատ նշումներու: Կամայ թէ ակամայ, սկսած է արժեւորուիլ Ազգայնականի շղթայագերծած մաշումի պատերազմէն ծնած «գործնապաշտ» մտայնութիւն մը, որ կեղծ իրատեսութեան քողին տակ կը փորձէ փորել հայոց քաղաքական կամքին հիմքը, քար առ քար: Հաստատեց նաեւ, որ հայերը եւ Հայաստան կը դիմադրուեն կենսական նշանակութիւն ունեցող այլ մարտահրաւէր մը՝ արտաքին ճշգրտումներէն եւ անհատական թէ խմբակային շահերէն բխող պարտուողական մօտեցումներուն բացայայտումը եւ յաղթահարումը:

Պէտք է թօթափել ընթացիկ կեանքի թմբիւր: Անհրաժեշտ է անդրադառնալ, որ տարածաշրջանին տիրող հակամարտութիւններուն ենթահողը եւ մեկնակէտը այն յեղեղուկ իրավիճակն է, որ յառաջացաւ Ա. Աշխարհամարտէն ետք կայսրութիւններու վերազնունով եւ ժողովուրդներու իրաւունքները անտեսող սահմաններու ստեղծումով, թէ՛ Մերձարեւելքի, եւ թէ՛ Անդրկովկասի մէջ: Պէտք է հաստատել, որ հայ-ազգայնական հակամարտութիւնը Արցախի կարգավիճակին կողքին ունի նաեւ աշխարհաքաղաքական հիմք, որուն արտայայտութիւնները կ'երեւին տարածաշրջանին շուրջ մեծպետական մրցակցութեամբ, Ազգայնականի նախապիւն ընդերքին նկատմամբ միջազգային շահագրգռուածութեամբ, թուրք-ազգայնականական միացումի ձգտումներով, թուրք-իրանեան լարուածութեամբ եւ յատկապէս, Արցախի աշխարհագրական դիրքին եւ ռազմաքաղաքական կշիռին վերաբեւորումով:

Հաստատեց ընդմիջ՝ չկա՛յ Արցախի առանձնացած հարց, կա՛յ Հայաստանի եւ հայութեան գոյութեան հիմնախնդիրը: Համազգային մարտունակ գաղափարը, արդարութեան համաժողովրդային ձգտումը եւ ազգային վերականգնումի ռազմավարութիւնը հիմերն են Հայաստանի հզօրացման եւ Ազգիկայն յարատեւութեան:

ՎԱՐՆԱԴ ՓԱՓԱԶԵԱՆ



«Հորիզոն» շաբաթաթերթի 2017 թուականի վարժողական ծրագիր

Գանատայի աշխատանքի եւ ընկերային զարգացման պետական բաժանմունքին կողմէ տրամադրուած յատուկ ֆոնտով, «Հորիզոն» շաբաթաթերթը այս տարի կը նախաձեռնէ ուսանողական վարժողական ծրագիր:

- Աշխատանքի մանրամասնություններ**
- «Հորիզոն»-ի ամենօրեայ խմբագրական աշխատանքներու ծիրէն ներս թարգմանություններ կատարել, անգլերէն, հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով:
 - Գաղութային ձեռնարկներու թղթակցություններ կատարել:
 - Հարցախոյզներ կազմակերպել:
 - «Հորիզոն»-ի վարչական աշխատանքներուն օգնել:
 - Բաժանորդագրություններու գործընթացը հետապնդել:
 - Արխիւներ դասարտել:

- Պայմաններ**
- Թեկնածուն 15-30 տարեկան, երկրորդական վարժարանի, Cegep-ի կամ համալսարանի ուսանող պէտք է ըլլայ:
 - Պէտք է լիաժամ ուսանող ըլլայ, որ վարժողական ծրագրէն ետք վերստին իր ուսումը շարունակէ:
 - Պէտք է Գանատայի քաղաքացի, մնայուն բնակիչ, կամ Immigration and Refugee Protection Act-ի օրէնքներով սահմանուած ապաստանեալ (Refugee) ըլլայ:
 - Պէտք է աշխատելու իրաւունք ունենայ:

- Աշխատանքի տեսողություն եւ վարձատրություն**
- Վարժողական այս ծրագրի դիմումները կը սկսին Ապրիլ 25-ին: Ծրագիրը կը սկսի Յունիս 19-ին եւ կ'աւարտի Յունիս 28-ին:
 - Ծրագրի տեսողությունն է 6 շաբաթ, շաբաթական 30 ժամ աշխատանքային ժամով եւ 11.25 տոլար ժամական վարձատրութեամբ:

Զեր դիմումագրերը ուղարկեցէք «Հորիզոն»-ի հասցէին մինչեւ Յունիս 8 3401 Olivier-Asselin, Montreal, Quebec, Canada H4J 1L5
Կամ Ե-նամակով ուղարկել «Հորիզոն»-ի վարչական պատասխանատու Սիլվա Էրամեանի հասցէին՝ sylvia@horizonweekly.ca

Այցելեցէք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

HITUNES.CA

Ունկնդրեցէք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռադիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ ժամը 8:00 - 9:00 լսեցէք շահեկան հարցազրոյցներ

TRIKTRAK.CA

Վիզեճնեցող Թիշատակը Անոր Գլխագիր Տեսակը Ապրեցնելով Է, Որ Կը Յաւերժանայ

Իմ սերունդիս մէջ թերեւս եղած եմ այն բախտաւոր քիչերէն, որոնք առիթը ունեցած են անձամբ ճանչնալու Վիզեճն Զաքարեանը: Մեր պարագային՝ պրն. Վիզեճնը, որովհետեւ դաշնակցական ընկեր Վիզեճնը ճանչնալէ առաջ մենք զինք ճանչցանք որպէս մեր նախակրթարանի մարզանքի ուսուցիչը:

1990-1991 տարեշրջանի վերամուտն էր, Սիւ թաղամասի Աքսոր Գասարեան ազգային վարժարանին մէջ մենք 8-9 տարեկան աշակերտներ էինք, երբ կենսուրախ ու արկածախնդիր ժպիտով երիտասարդ Վիզեճնը, իր արտաքին ճառագայթող պարզութեամբ, իր աւանդական ճերմակ թիւ-շրթով ու կապոյտ ճիւղով, առաջին անգամ ըլլալով ինքզինք ներկայացուց մեր դասարանին: Առաջին ճանդիպումէն իսկ յատակ էր, որ գործ պիտի ունենայինք անձի մը հետ, որուն նմանը սովոր չէինք տեսնել ուսուցչական կազմին մէջ: Եթէ յոգնեցուցիչ ու ճանճարացիչ դասապահէն ետք, մարզանքի պահերը արդէն իսկ դրախտային ժամեր էին մեզի համար, ապա պրն. Վիզեճնին որով անոնք վստահաբար ունեցան կրկնապատիկ գրաւելութիւն, պարզապէս որովհետեւ ան չունէր ուսուցիչի դասակարգ կարծրատիպը, մեզի հետ կը յարաբերէր ընկերոջ նման, իրեն յատուկ գուարճախօսութիւններով ու կատակներով: Արհեստական պատեր գոյութիւն չունէին ուսուցիչ-աշակերտ մեր յարաբերութեան մէջ: Նոյնիսկ երբ առիթներով անոր ապտակները կը համտեսէինք, անոնց մէջ չէինք զգար չարասրտութիւն, չէինք պահեր ու: Մենք՝ աշակերտներս, պրն. Վիզեճնը «մեզմէ» կը համարէինք: Իր արտաքին պարզութեամբ, անմար խանդավառութեամբ ու մարզանքի հանդէպ ունեցած իր անյագ սիրով, ան աւելի մեզ կը յիշեցնէր, քան՝ ուսուցչական մնացեալ կազմը:

Մինչեւ պրն. Վիզեճնի յայտնութիւնը, մեր աշխարհը ունէր երկու հիմնական հետաքրքրութիւն: Մէկը ֆուլթայլ խաղալն էր, միւսը՝ թաղի արար տարեկիցներուն դէմ տղայական աննպատակ կռիւներ մղելը: Շնորհիւ պրն. Վիզեճնին, մեր մինչ այդ երկրեւեռ աշխարհին մէջ, բացուեցաւ մէկ այլ ճորովոն մը եւս, երբ օր մը ան կանչեց մեզ իր մօտ եւ յորդորեց անգամադրուիլ ՀՅԴ Լիբանանի պատանեկան միութեան շարքերուն: Այդ դասարանին տղոց մէջ, ես չեմ յիշեր պարագայ մը, երբ ուսուցիչի մը արտադասարանային յորդորը մենք նկատի առած ըլլայինք, բայց պրն. Վիզեճնի ցուցմունքէն ետք, մեզմէ շատեր շարքի երեկոները սկսան իրարու հանդիպիլ «Միսաք Ազիրեան» ակումբի «Քրիստափոր» պատանեկան միութեան շարքերուն մէջ:

Շատ կը փափաքէի, որ այդ ժամանակաշրջանի յիշողութիւնս ըլլար այնքան մը հարուստ, որուն բերմամբ կարենայի Վիզեճնին իսկ բերնով արտասանուած խօսքերը ուղղակի հոս մէջբերել,

բայց յիշողութեանս մէջ մնացածը հիմնականին մէջ անոր խօսքերն ու ցուցմունքները չեն, այլ՝ անոր կենդանի օրինակն ու պահուածքը, որ աւելի դաստիարակիչ ու աւելի վարակիչ է, քան՝ հազար խօսք ու ցուցմունք: Մեր երեւակայութեան մէջ պրն. Վիզեճնը միշտ մնաց պարզութեան խորհրդանիշ, որ հակառակ տարիքի եւ հանգամանքի տարբերութիւններուն՝ բարդոյթներ չունէր թափանցիկօրէն յարաբերելու համար մեզի հետ, միաժամանակ՝ կեանքով ու եռանդով լեցուն անհատականութիւն մը, որուն աչքերուն մէջ անկարելի էր չնկատել արկածախնդրութեան վառվառուն ցոլքեր:

Դաշնակցական Վիզեճնին հետ մեր ծանօթացումը, դժբախտաբար, սկիզբ պիտի առնէր 8 մայիս 1992-ին: Դեռ լաւ կը յիշեմ բակին մէջ տիրող այն տարօրինակ մթնոլորտը, երբ ամէն օրուան պէս հասայ դպրոցի մուտքը: Սովորական վազվզուքն ու խեղդատակութիւնները դադարած էին, զսպուածութիւնը ակնբերէ էր, նոյնիսկ՝ մեզմէ ամէնէն չարածճիւղներուն մօտ: Հարցումիս, թէ՛ ի՞նչ է պատահարը, դասընկերոջս կարճ պատասխանը եղաւ. «Պրն. Վիզեճնը մահացեր է»:

Այդ պահէն մեր մատողաշ մտքերուն ու հոգիներուն մէջ աստիճանաբար կը սկսէր բացայայտուիլ Վիզեճն Զաքարեանի դաշնակցական հայ մարդու տիպարը, որ 23 տարեկան հասակին տուն-տեղ ու երիտասարդ կեանքի բոլոր մակերեսային գուարճութիւնները թողած, գացած էր Շուշի՝ իր ներդրումը ունենալու արցախեան ազատագրական պայքարին մէջ, ու զայն պակաս զերատասարդ կեանքի նուիրաբերումով: Վախիլքը, դրամը, դիրքերու ձգտումը, նոյնիսկ սէրը, չէին կրցած թուլցնել իր հաւատարմութիւնը դաշնակցականի իր երդումին եւ այս կուսակցութեան յարկին տակ ստացած իր դաստիարակութեան: Մարդու կեանքին մէջ հազուադէպ պահեր կան, երբ բացարձակ յստակութեամբ անոր կը յայտնուի իր սեփական կոչումը, այն թիրախը, որուն նուաճման մէջ ան կը տեսնէ իր գերագոյն երջանկութիւնը, բայց քիչեր են, որոնք կ'անսան այդ պահուան ու կ'որդեգրեն այդ ուղին, որովհետեւ անկա յաճախ յղի է մեծ զոհողութիւններով: Վիզեճնը այդ քիչերէն էր: Հասած էր անոր պահը, եւ գոյութիւնը չունէր ուժ մը, որ կասեցնէր իր նպատակասլաց երթը: Հետագային, երբ առիթը կ'ունենայինք մօտէն ծանօթանալու Արցախեան հերոսամարտի պատմագրութեան, անոր մանրամասնութիւններուն, ու մանաւանդ այս պատմական պահուն սփռուքեան ուժերու ներգրաւուածութեան չափին, Վիզեճնին տիպարը աւելի եզակի կը դառնար մեր աչքերուն:


Արդարամիտ ու անկեղծ պէտք է ըլլալ ընդունելու համար, որ ՀՅԴ դաշնակցութեան ընտրանի հաւաքականութեան մէջ բոլորս իսկապէս ընտրանիներ

չենք: Բոլորս այդպէս չէինք ասկէ 124 տարիներ առաջ, այսօր եւս, միեւնոյն այս կուսակցութեան մէջ, բոլորս ընտրանիներ չենք, թէեւ համեմատութեան իմաստով, հակառակ վիճ մը գոյացած է երկու ժամանակակից տեղի միջեւ: Ընտրանի մակդիրը միշտ ալ վերապահուած եղած է սակաւթիւ խմբակի մը, որ ո՛չ միայն իւրացուցած է դաշնակցականի ոգեղէն տիպարը, այլ նաեւ թքած ունեցած է աշխարհիկ կեանքի բոլոր տեսակի փորձութիւններուն, որոնք կը խափանեն այդ տիպարին առաքելութիւնը: Քրիստափորներու, Գէորգներու ու Նժդեհներու շունչով հունաւորուած մարդկային կորիզն է այս խմբակը, որուն արժանաւոր անդամներու գուժմարուած վաստակով, հայ իրականութիւնը իր ֆիզիքական ու հոգեմտաւոր շերտերով այսօր տակաւին կը շարունակէ գոյատեւել այս աշխարհի երեսին: Վիզեճնը, իր համեստութեամբ, նուիրումով ու մանրութեամբ հանդէպ ունեցած իր արհամարհանքով իրաւամբ կը պատկանի սակաւթիւ այս ընտրանիին:

Այսօր Շուշիի ազատագրումէն ու Զարիսուլի բարձունքներուն վրայ Վիզեճնի նահատակութեան անցած են 23 տարիներ: Այս առթիւ, մինչ մեր ընկերոջ պայծառ յիշատակը տակաւին յուզախառն հպարտութեամբ մը կը լեցնէ մեր հոգիները, դաշնակցական բարոյականութիւնը կը պարտադրէ մեզ մեր հայեացքները ուղղել այսօրուան իրականութեան ու հարց տալ, թէ՛ արդեօք որքանո՞վ հաւատարիմ մնացած ենք մեր նահատակներու կտակին, թէ՛ որքանո՞վ իւրացուցած ենք անոնց մարմնացուցած ամէնքները, թէ՛ որքանո՞վ մեր վարքն ու բարքը, մեր կենցաղը կը յիշեցնեն Վիզեճնին: Դաշնակցական բարոյականութիւնը կը պարտադրէ մեզ՝ մեր հայեացքները ուղղել նախ մեր վրայ ու ինքնաքննադատութեամբ խարազանել բոլոր այն պիղծ ու գոեհիկ երեւոյթները, որոնք կը բաժնեն մեզ մեր նահատակներու աւանդէն:

Քաջութիւնը պէտք է ունենալ ընդունելու համար, որ մեր ապրած օրուան իրականութիւնը համահունչ չէ մեր նահատակներու արժէքային համակարգին: Հետեւաբար, իբրեւ դաշնակցականներ, միակ պարկեշտ զգացումը, որ կրնանք ունենալ այսօր, նախ Վիզեճնին հարագատներուն, ապա այս զինանշանին առջեւ, ամօթի զգացումն է: Այո՛, մեր գոհաբերութեան մակարդակը մղոններ ետ մնացած է Վիզեճնի նուաճած գոհաբերութեան մակարդակէն: Այո՛, մինչ մեր մեծ մեռելները կը սաւառնին նահատակութեան երկիւրքին մէջ, մենք տակաւին կը գրօսենք միջակութեան գարշելի առանցքներուն մէջ: Այո՛, մեր հերոս ընկերոջ, ուսուցիչին, դաշնակցական հայու տեսակը տակաւին չենք կրցած պարտադրել մեր ճահճացած միջավայրին վրայ:

Վիզեճններուն յիշատակը տարեկան



հոգեհանգստեան արարողութիւններով չէ, որ անմար կը մնայ: Վիզեճններուն յիշատակը, անոր գլխագիր տեսակը ապրեցնելով է, որ կը յաւերժանայ: Ահա ա՛յս է մեր եւ ի մասնաւորի մեր ղեկավարութեան առջեւ ծառայած խնդիրը՝ ԱՊՐԵՑՆԵԼ ՎԻԳԷՆՆԵՐՈՒ ՏԵՍԱԿԸ: Երիտասարդի այն տեսակը, որուն անմիջական հետաքրքրութիւնները ամբողջովին սահմանափակուած չեն միայն բարձր ուսումով, լաւ ասպարէզով ու փայլուն դիրքով: Այն տեսակը, որ կը գիտակցի, թէ՛ դաշնակցական երդումը ձեւական արարողութիւն մը չէ, եւ թէ՛ դաշնակցականութիւնը նաեւ կեանքի ու ապրելու ձեւ է: Այո՛, հերոսացնենք մեր նահատակները յետմահու, բայց գուրդուրանք անոնց տեսակին վրայ ու խնամենք զանոնք, իրենց կեանքի ընթացքին: Ապրեցնենք, աճեցնենք ու բազմացնենք Վիզեճնը մեզմէ իւրաքանչիւրին մէջ, որպէսզի վաղը այսօրուէն աւելի յուսատու ըլլայ, որպէսզի այսօրուան տեղատուութիւնը փոխարինուի վաղուան յառաջխաղացքով, որպէսզի հայ հաւաքական կեանքը գէթ հնարաւորութիւն ունենայ ընթանալու բարգաւաճ ու վարդապոյն հեռանկարով:

Թող որ Շուշիի ազատագրութեան 23-ամեակը մեր նահատակներու ու անոնց դժած ուղեգիծին հետ հաղորդուելու, ապաշխարելու, ամօթը թօթափելու, թարմանալու ու գործի լծուելու մեկնակետը դառնայ բոլորիս համար: Վիզեճն Զաքարեան այլ բան պիտի չպահանջէր մեզմէ այսօր:

Փա՛նք իրեն եւ փա՛նք բոլոր այն արիասիրտ տղոց անխտիր, որոնք մայիսի 7-8-ի լուսցող գիշերը, կը գտնուէին Շուշի տանող ճանապարհներուն վրայ: Անոնց քրտինքն ու արիւնը յաւերժ պիտի ոռոգէ իսկական դաշնակցական մարդու հոգեկան աշխարհը: Անմահութեան դափնին կը պատկանի անոնց, որոնք սովորական կեանքի աղբսներուն, թէ՛ պատերազմի փամփուռներուն ճայնին տակ, անչեղ կը մնան իրենց հետապնդած խոշակներէն:

ԽԱՉԻԿ ԽԱՉԵՐԵԱՆ

Voyages HAIG Travel
Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676
ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
PERMIS DE QUÉBEC
3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝
Videotron: HD616 կամ SD16
Bell Fibe: HD1216 կամ SD216
Շաբաթ - 08:30 (առաջին սիւնով) եւ 1:30am
Կիրակի - 3:30pm
Երկուշաբթի - 08:00, 10:30pm, 1:30am
Երեքշաբթի - 12:00pm
Չորեքշաբթի - 6:30am եւ 7:30pm
Հինգշաբթի - 12:30pm, 12:30am
Ուրբաթ - 3pm
Ուղիղ արձակում՝ www.icitelevision.ca

**Ի ՅՈՒԾ
ԿԻԼԻԿԵԱՆ ԻԾՍԱՆՈՒՀԻ
Գայիանէ-Պերթա Մինասեան-Հելլըր**

Բարերարուհի Գայիանէ-Պերթա Մինասեան ծնած էր 20 Նոյեմբեր, 1928-ին, Թանթա, Եգիպտոս: Հայրիկին անունն էր Մերձան, մայրիկին անունը՝ Փերուզ (աղջկույթեան մականունով՝ Եղճեան):

Մանուկ տարիքին ընտանեօք փոխադրուած էր նախ Աղեքսանդրիա, ապա՝ Գահիրէ: Այնտեղ Գալուստեան Վարժարան յաճախած էր նախ, եւ ետքը՝ անգլիական St-Mary Վարժարանը:

Երիտասարդութեան վաղ շրջանին իսկ ինքզինք յայտնած էր իբրեւ համարձակ եւ նախաձեռնող:

Իր կեանքին անկլենադարձային որոշումը պիտի ըլլար 1956-ին Միացեալ Նահանգներ գաղթելն ու հաստատուիլը Նիւ Եորք: Հնարամիտ՝ յաջողած էր Նիւ Եորքի Մօնսանթօ ընկերութեան պաշտօնեայ դառնալ ու հետզհետէ պաշտօնի բարձրացում ունենալ եւ մեծ հեղինակութիւն ձեռք ձգել:

Հանդիպած էր միջազգային իրաւաբան Ուորըն Հելլըրի եւ ամուսնացած: Ամուսինը իր պաշտօնին բերմամբ Փարիզ կ'ապրէր, իսկ ինք՝ Նիւ Եորք: Զոյգը կրցած էր համադրել ամուսնական կեանքը՝ հակառակ ասպարէզի վայրերուն հեռուորութեան: Եւ այսպէս՝ մինչեւ ամուսնին մահը 1999-ին:

Պերթայի հարազատները Մոնթրէալ էին: Մանուկանդ՝ իրեն համար քրոջ պէս շատ սիրելի լուսահոգի Արմինէ Չալքեանն ու անոր ամուսինը՝ լուսահոգի Գրիգոր Մարգարեանը: Ուստի կ'որոշէր Մոնթրէալ փոխադրուիլ: Այստեղ վայելեց թէ՛ իր հարազատներուն սէրը, եւ թէ՛ Ս. Յակոբի համայնքին մեծ յարգանքը: Ան իր առատաձեռնութեամբ ճանչցուեցաւ: Ինք որ նուիրատուութեան հրճուանքը գիտէր Նիւ Եորքեան օրերէն՝ բազմազան ընկերային օժանդակութեան ծրագրերներու, նաեւ՝ կենդանիներու պահպանութեան ծրագրերներու աջակցելով, Մոնթրէալի մէջ պիտի ուրախանար բարերարութեամբ. միշտ յիշատակելի պիտի մնան իր նուիրատուութիւնները Ազգային Առաջնորդարանին, Ս. Յակոբ Վարժարանին եւ Ս. Յակոբ Եկեղեցոյ: Գանատայի Հայոց Թեմի նախկին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի դիմումով՝ Արամ Ա. Վեհափառ 2007-ին իրեն պարգեւեց Կիլիկեան Իշխանուհի շքանշան: Յետ այնու, ան շարունակեց սատարել համայնքային այլազան ձեռնարկներու: Իր վերջին նուէրն ալ՝ Ս. Յակոբ Եկեղեցին ճոխացուց վերնատունով մը:

Գայիանէ-Պերթա Մինասեան-Հելլըր մահացաւ 2 Մայիս 2017-ին: Մարմինը կը հանգչի Սէն Լօրան գերեզմանատան մէջ:



**Նախագահ Սարգսեան Արցախի Մէջ
Ներկայ Գտնուած Է Եռասունին Առիթով
Կազմակերպուած Հանդիսութեան**

Հայաստանի Հանրապետութեան նախագահի պաշտօնական կայքը կը հաղորդէ, թէ աշխատանքային այցելութեամբ Արցախի Հանրապետութիւն գտնուող Հայաստանի նախագահ, զինուած ուժերու գերագոյն գլխաւոր հրամանատար Սերժ Սարգսեան երէկ Շուշի մէջ հանդիպում ունեցած է 2017-ին զօրացրուած, ինչպէս նաեւ ներկայիս ժամկէտային զինուորական ծառայութեան մէջ գտնուող եւ ծառայութեան ընթացքին անձնութեան ու խիզախութեան համար խրախուսման արժանացած խումբ մը զինուորներու եւ զօրացրուած սպաներու հետ: Հանդիպումին մասնակցած են Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Վլիքէն Սարգսեան, ինչպէս նաեւ զինուորականներ՝ հազարապետ - զօրավար Նորատ Տէր Գրիգորեանց եւ գնդապետ - զօրավար Արկաղի Տէր Թադեւոսեան, որոնց անցած ուղին օրինակ է ներկայիս զինուորներուն համար:

**Կարօ Փայլան Օթթաուայի Մէջ Հանդիպում
Կ'ունենայ Գանատայի Խորհրդարանի
անդամներու հետ**

2 Մայիս 2017-ին, Թուրքիոյ Խորհրդարանի հայազգի անդամ Ժողովուրդներու Ժողովրդավարական կուսակցութեան հիմնադիրներէն Կարօ Փայլան Օթթաուայի եւ Մոնթրէալի մէջ շարք մը հանդիպումներ ունեցաւ Խորհրդարանի անդամներու եւ գանատացի նախկին պաշտօնատարներու հետ: Օթթաուայի հանդիպման ներկայ էր Հայաստան-Գանատա Խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան նախագահ Աուրոլա Չան: Հանդիպումը կազմակերպուած էր Գանատայի Հայ Դատի յանձնախումբին կողմէ:

Փայլան հանդիպումներուն ընթացքին առիթ ունեցաւ ներկայացնելու Թուրքիոյ մէջ ներկայ քաղաքական մթնոլորտը, սահմանադրական հանրաքուէի յաջորդած հանգրուանն ու Թուրքիոյ մէջ ապրող փոքրամասնութիւններու իրաւունքներու եւ ազատութեան վերաբերեալ անորոշութիւնն ու մտահոգութիւնը:

Նոյն օրը Փայլան նաեւ առիթ ունեցաւ հանդիպում ունենալու Գանատայի արդարադատութեան նախկին նախարար, նախկին ընդհանուր դատախազ եւ Մարդկային իրաւանց «Ռաուլ Ուալընպերկ» կեդրոնի ներկայ գեկավար Լըուին Գոթլըրի հետ: Հանդիպումի ընթացքին նոյնպիսի հարցեր արծարծուեցան ու քննարկուեցան:

Linda KHARABOYAN, LL.B., D.D.N.
Notaire et conseillère juridique

Testament
Mandat
Procuration
Financement
Immobilier
Attestations

Consultation personnalisée à domicile
Տնւնրու այցելութիւն ըստ փափաքի

1430, boulevard Saint-Martin O., Laval (Québec) H7S 1M9
T. 514.883.3498 F. 450.328.1258 E. linda@chezenotaire.ca

VIZUALIS
optométriste

DR SHANT DONABEDIAN
Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO
Cristal

(514) 744 4313

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement
Video - Reproduction

647 Boul. Decarie
VSL Montreal QC
H4L 3L3

photocristal@hotmail.com
www.photocristal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CEL) • CRÉATION D'HÉRITAGE •
REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI
MIRABEL
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիք ունի
20 հայ թաքսի վարորդի Միքաէլ շրջանին մէջ:
Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:
Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. Call/Appelez: (514) 979 1317

RE/MAX
RE/MAX 3000 inc.
Agence Immobilière

Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker

C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE
HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POUFRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOUVREMENT SUR ONGLES
NATURELS

Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666

krikormar@gmail.com

FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM™
Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

SOSIE DERNERSESSIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830
716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Նոտար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

ԳՐԱԽՈՒԱԾ ԹՈՒԱԳԱՆՆԵՐ

ՀՕՄԻ ԼԱԻԱԼԻ «ՇՈՒՇԻ» ՄԱԱՄՆԱՃԻՎ
Ուրբաթ, 26 Մայիս - Մայրերու Տօն եւ Համբարձում
Շաբաթ, 3 Յունիս - Նախանշ եւ դասախօսութիւն

ՄՈՆԹՐԷԱԼ

Համագգայինի «Մուշեղ Իշխան» գրադարանը խիստ կարիք ունի կամաւոր մարդուծի: Կը խնդրենք, որ հետաքրքրուողները հեռաձայնով կապ պահեն գրադարանի անձնակազմին հետ, երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը կ.ե. ժամը 1:00-5:00, իսկ Կիրակի օրերը առաւօտեան ժամը 11:00-էն կ.ե. ժամը 2:00: Հեռաձայնի թիւ՝ 514 337-7753:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հոգելոյս ԿՈՐԻԻՆ ԱՐՔ.ՊԱՊԵՆԻ վախճանման Բ.տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայաստանեաց առաքելական եկեղեցւոյ մէջ, Կիրակի, 21 Մայիս, 2017 թին: Սգակիրներ՝ Պապեան - Բէլէշեան ընտանիքներ ու հարազատներ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տիկին Անի Ազկիլեան անհուն շնորհակալութիւն կը յայտնէ Համագգային «Գլաճոր» մասնաճիւղի վարչութեան, եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, հեռաձայնով, բացիկով, ե-մամակով, եւ այլ միջոցներով բարի ապահովում մաղթեցին գործողութեան առիթով:

Armenian Heritage Cruise XXI

Fort Lauderdale, FL – Armenian Heritage Cruise XXI 2018 January 20-28, 2018 – Eastern Caribbean Cruise aboard the Royal Caribbean’s Freedom Of The Seas. Travelling to: St. Kitts / St.John’s Antigua / San Juan / Labadee, Private Island. Cabin Rates starting from US \$1044 / person based on Double Occupancy, including Port Charges and ACAA registration fee. Government taxes of \$108.36 are additional. Armenian Entertainment, Armenian Cultural Presentations, Armenian Festival Day, Tavlou & Belote Tournaments and much more. Call TRAVELGROUP INTERNATIONAL @1- 561-447-0750 or 1-866-447-0750 Ext. 108. Ask for Janie.

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«ՀՈՐԻԶՈՆ» որեւէ ձեռով եւ որեւէ ժամանակ պատասխանատու չէ լոյս տեսած ծանուցումներու բովանդակութեան:
«ՀՈՐԻԶՈՆ» իրաւունք ունի ընդունելու կամ մերժելու որեւէ ծանուցում կամ յայտարարութիւն:
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ Կ’ընդունին միայն գրաւոր, որոնք խմբագրութեան պէտք է յղուին թերթի լոյս ընծայման ժամկէտէն առնուազն 7 օր առաջ:

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Videotron: HD616 կամ SD16
Bell Fibe: HD1216 կամ SD216

Շաբաթ - 08:30 (առաջին սփռում) եւ 1:30am
Կիրակի - 3:30pm
Երկուշաբթի - 08:00, 10:30pm, 1:30am
Երեքշաբթի - 12:00pm
Չորեքշաբթի - 6:30am եւ 7:30pm
Հինգշաբթի - 12:30pm, 12:30am
Ուրբաթ - 3pm
Ուղիղ արձակում՝ www.icitelevision.ca



Այցելեցէք Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան կայքէջը՝ www.canada.mfa.am



MOSAÏQUE MUSICALE
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ
SAMEDI 3 JUIN 2017 à 19 h 00

Église Arménienne Sourp Hagop
3401 Rue Olivar-Asselin, Montréal (Qc) H4J 1L5

Au Programme :
J. S. BACH
G. VERDI
F. LEHAR
E. CURTIS
A. SPENDIARIAN
P. GANACHIAN
GOMIDAS

Մուտքի նուէր՝ **\$20**
Տոմսերու համար դիմել՝
514 726-2349 / 514 295-2345

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՍԷ

«Հորիզոն» ի յղում թղթակցութիւններն ու յօդուածները պէտք է գրուած ըլլան ընթերցելի ձեւով, մախրնորարար մեքենայով կամ ե-մամակի մեր հասցէին յղուած: Անստորագիր եւ առանց հասցէի գրութիւնները նկատի չեն առնուիր: Խմբագրութեան յանձնուած նիւթերը հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:

Հրատարակուած յօդուածներու մէջ տեղ գտած կարծիքները անպայմանօրէն չեն ներկայացներ խմբագրութեան տեսակէտը:
Ցապաղած թղթակցութիւնները չեն հրատարակուիր:
Բոլոր թղթակցութիւնները ենթակայ են խմբագրման եւ վերամշակման:
Ստացուած յօդուածներն ու թղթակցութիւնները հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը վերապահուած է խմբագրութեան:

horizon
HORIZON
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription
Canada
2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Eshradjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylva@horizonweekly.ca
Courier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Վարիչ խմբագիր
Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու
Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-համեան, Թինա Սիլվահեան
Չեռատրում՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնիա Աճէմեան
Սոնա Թիթիզեան-Կէտիկեան

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գարուստ Պապեան, Վազգէն Տէկիմէնթաշ,

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ



ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) - Բացառիկ անակնկալ մը կը սպասուի այս շաբաթ, որուն ի տես շատ պիտի ուրախանաք եւ անդրադառնաք, որ ձեր տքնաջան աշխատանքը իւրայատուկ արձագանգ կը գտնէ ամենուրեք: Այս մէկը խթանիչ ուժ պիտի հանդիսանայ նաեւ ապագայի ձեր ծրագիրներուն:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) - Ժամանակ տրամադրեցէք մտածելու, վերջերս շատ արագ որոշումներ կ'առնէք, առանց կանխապէս լաւ մտածելու, այս մէկը կրնայ ձախողութեան առաջնորդել ձեզ: Որդեգրեցէք անելի հաւասարակշռուած գործելաձեւ յետ այսու:

ԵՐԿՈՒՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) - Հիմնականում պատրաստուեցէք գալիք ծախսերը խելամտօրէն կարգաւորելու, այլապէս մեծ դժուարութեան պիտի մատնուիք, լաւ կ'ըլլայ, եթէ փորձեք քիչ մըն ալ դրամ խնայել՝ անսպասելի անակնկալներու առ ի պատրաստութիւն:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) - Բնաւ կարիքը չունիք ունէ մէկուն, որպէսզի ձեզ առաջնորդէ, դուք առանձին կրնաք գլուխ հանել ձեր մտադրութիւնները, հետեւաբար մի տնտեսք, այլ շուտով գործի լծուեցէք, որպէսզի ճիշդ ժամանակին ի կատար ածեք ձեր նպատակները:

ԱՌԻԺ (24 Յունիսէն 23 Օգոստոս) - Հանգիստի կարիքը ունիք, թող տուէք ամէն ինչ եւ երկար շունչ մը քաշելով քիչ մը հեռացէք ճնշող եւ խեղդող մթնոլորտէն: Պետք չկայ այսքան ծանարաբեռնուելու, առիթ տուէք, որ ընտանիքի միւս անդամներն ալ ձեզի հետ պատասխանատուութիւն ստանան:

ԿՈՅԱ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Ընտանիքի խնամքը եւ յոգնածութենէ ձերբազատուելու համար նախընտրելի է, որ մարզանքի հետեւիք, շաբաթական գոնէ երկու կամ երեք անգամ, այդ մէկը շատ պիտի օգնէ ձեզի, որպէսզի վերագտնէք ձեր նախկին վիճակը:

ԿՇԻՈՔ (24 Սեպտեմբերէն 23 Յոկտեմբեր) - Ընտանեցո լուրջ հարց մը կը դիմագրաւէք, ճիշդ է, որ բոլորը ձեզ կը զրպարտեն այդ հարցով, սակայն դուք ալ բնաւ չէք փորձեր դուք ձեզ արդարացնել: Պետք է իրականութիւնը յայտնէք, որպէսզի անելի դիրքին ըլլայ հարցին լուծումը:

ԿՈՒԻՃ (24 Յոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Ձեր ընտանիքին ժամանակ յատկացուցէք, անոնք կարիքը ունին նաեւ ձեր ներկայութեան, ոչ միայն օժանդակութեան, ձեր բաժնեկցութեան եւ ոչ միայն նիւթական սատարումին: Զգոյշ եղէք, որ ձեր այս անտարբերութիւնը երկար չտևէ:

ԱՐԵՆԱԿՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Չափազանց մսխումներ ունեցաք այս շրջանին, զգոյշ եղէք, այսքանը բաւարար է, եթէ այսպէս շարունակէք, ապա պիտի սնանկանաք: Անմիջապէս ձեր ծախսերը կարգաւորեցէք, որպէսզի կարենաք շուտով ամէն ինչ հակակշռել:

ԱՅԾԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Հին բարեկամութիւն մը կը վերակենդանանայ, շնորհիւ անակնկալ հանդիպումի մը: Անտարբեր մի՛ ըլլաք այս անակնկալին հանդէպ, որովհետեւ այս մէկը նոր առիթներ պիտի ստեղծէ գալիք շաբաթներուն:

ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար) - Կը չափազանցէք հարցերը, այս մէկուն պատճառը վերջերս ձեր տկարացած վիճակն է: Պետք է շուտով ձեր ուժերը հաւաքէք եւ անելի առարկայական մօտեցում ցուցաբերէք հարցերուն նկատմամբ: Զգացական ձեր աշխարհէն քիչ մը դադար առէք:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Նոր ծանօթութիւններ պիտի հաստատէք այս շաբաթ, որոնք աշխուժութիւն պիտի պարգտեն ձեզի: Ձեր մտերիմներուն հետ լաւ ժամանակ անցուցէք, բայց նաեւ մի մոռնաք ձեր ընտանիքին անդամները, որոնք միշտ ձեր աջակցութեան կարիքը ունին:

Ս. ԳԵՂՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ԼԱԽԱԼ ՈՂՔ. ՆՈՒՊԱՐ ԵԿԵՂԵՑԱՆԵԱՆԻ մահուան 40-ին առթիւ:

- Ս.Ս. Ալպէր, Ժաննէթ Երկիրպաշեան 100
- Տիկ. Նուշիկ Զարչաֆեան- Երկիրպաշեան, Մեան եւ Փաթիլ 150
- Տիկ. Հիտա Երկիրպաշեան եւ Գանիա 100
- Տիկ. Շողիկ Երկիրպաշեան, Ալէք եւ Թամար 100
- Ս.Ս. Մանուէլ, Շաքէ Զարչաֆեան 100
- Ս.Ս. Պետիկ, Անի Զարչաֆեան 100
- Ս.Ս. Տիգրան, Նանոր Զիլեան 100
- Ս.Ս. Երեմ Մաքսատեան 25
- Տիկ. Լուսին Վարդիվառեան 20
- Տիկ. Ալիս Քէմանեան 20
- Ս.Ս. Վարուժ, Նայիրի Գազարեան 25
- Տիկ. Ռեբեկա Քէլապաճեան 25
- Տիկ. Թենի Մէրէնիկեան 50
- Ս.Ս. Զոհրապ, Ժապիկ Մազաբեան 25
- Տիկ. Ռինա Մազաբեան եւ զւկնք. 25
- Իրէկեան ընտանիք 50
- Ս.Ս. Միհրան, Զէֆիրո Մրդիկեան 40
- Մասիս Մրդիկեան եւ դուստրը Անիա 25
- Տիգր Տիգրան Եօթնախպարեան 20
- Ս.Ս. Կէրի, Գանիա Կիրակոսեան 30
- Ս.Ս. Վարուժան Քիչեան եւ զւկնք. 25
- Ս.Ս. Գէորգ Նարեկեան եւ զւկնք. 50
- Ս.Ս. Վարդան, Արփի Արչակեան 40
- Ս.Ս. Աւետիս Հայաթեան 25
- Ս.Ս. Կապի, Սիմա Զափարեան 40
- Ս.Ս. Տանիէլ, Նանոր Թաշեան 40
- Ս.Ս. Վաչէ Յարութիւնեան, Գօգօ եւ Մելիսա 30
- Ս.Ս. Համբարձում Լախոեան 20
- Ս.Ս. Փիլէո Համար ընտանիք 20
- Ս.Ս. Յակոբ, Սարի Լախոեան եւ զւկնք. 35
- Ս.Ս. Համլէթ, Ազնիւ Ղզանեան եւ զւկնք. 35 (Լուս Անճէլոս)
- Ս.Ս. Ռաֆֆի Գասապեան 20
- Տիկ. Արարիք Փենիվանեան 20
- Ս.Ս. Տայի Թորոսեան 20
- Մանիս եւ Ռիթա Գասապարեան 20
- Ս.Ս. Գրիգոր Թորոսեան 40
- Ս.Ս. Ռաֆֆի Ֆրանկել 50
- Ս.Ս. Վիգէն, Վիտիկ Թէմիրեան եւ զւկնք. 20
- Ս.Ս. Յակոբ, Նանի Տէմիրեան, Գանիա Տէմիրեան, Ս.Ս. Վարուժ, Արփի Արթիւնեան եւ դուստրը 40
- ՈՂՔ. ԹՈՐՈՍ ԺՈՒԼԱԳԵԱՆԻ մահուան 40-ին առթիւ:**
- Տիկ. Տիկ. Սիլվա Ժուլպազեան 25
- Ս.Ս. Նապիւ, Ռոզալին Թաշէր եւ զւկնք. 30
- Ս.Ս. Յովհաննէս, Գոհար ՕՇաննէսեան եւ զւկնք 150
- Ս.Ս. Նուշիկ Պաղտատեան 20
- Ս.Ս. Գառօ, Սօսի Գրեմեան 30
- Ս.Ս. Զորճ Պաղտատեան 20
- Ս.Ս. Յովհաննէս Պողոզեան 30
- Ս.Ս. Վահէ, Մարի Նուպարեան 25
- Ս.Ս. Յարութ, Թալին Պաղտատեան 40
- Թորոս Բանոյեան ընտանիք 25
- Սոսիա Զաքարեան 25
- Գանիա Բանոյեան 20
- Ս.Ս. Սարգիս Տէպոլդեան 20
- Ս.Ս. Նազարէթ Մոճեան 20
- ՈՂՔ. ԳՐԻԳՈՐ ԳՈՒԾԵԱՆԻ մահուան 5-րդ տարեկիցին առթիւ:**
- Տիկ. Սեղա Գուշեան, Ս.Ս. Իշխան, Նորա Աւետիսեան եւ զւկնք., Ս.Ս. Ռաֆֆի, Սեղա Գուշեան եւ զւկնք., Ս.Ս. Յարէթ, Լուսի Իգմիրեան եւ զւկնք. 150
- Ս.Ս. Մոսիկ, Սեղա Թօփուզեան եւ զւկնք. 20
- Ս.Ս. Յովհաննէս Թօփուզեան եւ զւկնք. 20
- Ս.Ս. Յակոբ Ռակիրեան եւ զուակ 50
- ՈՂՔ. ՎԻԳԷՆ ՈՍԿԵՐԻՉԵԱՆԻ մահուան առաջին տարեկիցին առթիւ եւ Համայն ՈՍԿԵՐԻՉԵԱՆ ԵՎ ՔԻԻՓԷԼԵԱՆ ընտանիքներու ննջեցեալներու յիշատակին:**
- Ս.Ս. Յակոբ Ռակիրեան եւ զուակ 50
- Ս.Ս. Ռաֆֆի, Սեղա Գուշեան 20
- ՈՂՔ. ՀԱՅԿԱՋ ՄԷԼԻՔԵԱՆԻ յիշատակին:**
- Տիկ. Շողիկ Երկիրպաշեան ընտանիք 40
- ՈՂՔ. ՅԱՐՈՒԹԻՆ ԵՎ ՄԱՐԻ ՄԻՆԱՍԵԱՆՆԵՐՈՒ յիշատակին:**
- Ս.Ս. Վարդգէս Բարախեան 30
- Ս.Ս. Սարգիս, Մանան Ապրազեան 30
- Պերճ եւ Արրահամ Մինասեան 50
- Ս.Ս. Գօգօ, Անի Թիֆլէքեան 30
- ՈՂՔ. ՅՈՒՎԱՆՆԵՍ ԹՕԹՈՒՋԵԱՆԻ մահուան 40-ին առթիւ:**
- Տիկ. Տիգրանուհի Թօփուզեան, Սօսի եւ Շողիկ 50
- Ս.Ս. Ռաֆֆի, Սեղա Գուշեան եւ զւկնք. 50

Ս.Ս. Մոսիկ, Սեղա Թօփուզեան եւ զւկնք. 50

- Տիկ. Սեղա Գուշեան 25
- Ս.Ս. Յարութ, Մարի Արապեան եւ զւկնք 150
- Պոսթրն Տիկ. Նուարդ Գուշեան 75
- Պոսթրն Ս.Ս. Պերթօ Գոհէն 50
- Ս.Ս. Կարօ, Անժէլ Հովուրեան 50
- Ս.Ս. Գրիգոր, Անի Մառուկեան 20
- Ողք. Սիլվա Քարապաշեան 20
- Տիկ. Սոնա Մայիլեան 20
- Ս.Ս. Մահակ, Զուարդ Օտապաշեան 20
- Տիկ. Վերթին Բուշիկեան 20
- Ս.Ս. Յակոբ, Ռիթա Արթիւնեան եւ զւկնք. 25
- Պորոնիթ Ս.Ս. Պետրոս, Օվսաննա Փիլաւանեան եւ զւկնք 50
- Պորոնիթ Տիկ. Զմրուտ Անիվանեան 20
- Տիկ. Սօսի Թորոսեան եւ զւկնք. 40
- Տիկ. Սիմա Մարունեան 20
- Ս.Ս. Վարուժան, Սիրուն Մելքոնեան 25
- Ս.Ս. Անդրանիկ Եունանեան 20
- Ս.Ս. Ղազարոս, Արփի Մաթեան 20
- Ս.Ս. Կարպիս, Լենա Արրահամեան 20
- Ս.Ս. Ասպետ, Թալին Աւետիսեան 25
- Տիկ. Լուսին Վարդիվառեան 20
- ՈՂՔ. ԱՐԱՔՍԻ ՇԻՐԻՆԵԱՆԻ մահուան 40-ին առթիւ, մահացած Քալիֆորնիս:**
- Ս.Ս. Մկրտիչ եւ Էլիզապէթ Շիրինեան, Տիկ. Ազնիւ Շիրինեան, Տիգր Արամ Շիրինեան 150
- Ս.Ս. Մովսէս, Վանտա Քէտաշեան 50
- Ս.Ս. Արի, Մարիս Գուշեան 25
- Ս.Ս. Վիգէն, Թանիա Քէտաշեան 50
- Ս.Ս. Սարգիս, Մանան Ապրազեան 50
- Ս.Ս. Գրիգոր, Գոհար Գանձեան 50
- Ս.Ս. Վաչէ, Արփի Փանոսեան եւ զուակ 50
- ՈՂՔ. ԱՐՇՈ ՋԱՊՈՒՆԵԱՆ-ԱՊՐԱԼԵԱՆԻ մահուան առաջին տարեկիցին առթիւ, մահացած Հայաստան:**
- Ս.Ս. Մկրտիչ Արարիկեան եւ զուակը Արամ 50
- Պանքեան ընտանիք 30
- ՈՂՔ. ԷՎԱՆՈՅԵ ՊԱԼԵԱՆԻ մահուան առաջին տարեկիցին առթիւ, մահացած Փարիզ:**
- Տիգր Սարգիս Պալեան 50
- ՈՂՔ. ԳՐԻԳՈՐ ԳԱԼԱՅԵԱՆԻ մահուան 2-րդ տարեկիցին առթիւ:**
- Ս.Ս. Ներսէս Գալայեան 25
- ՈՂՔ. ԵՕԼԱՆՏ ԱԼԹԻՔԱԹԵԱՆԻ յիշատակին:**
- Տիգր Աւետիս Զափարեան եւ Անի 20
- Ս.Ս. Յակոբ Զափարեան 20
- Մելքոն Թօփուզեան ընտանիք 20
- Տիգր Ժապ Ալթիբեան 20
- Տիգր Նուշիկ Արամեան 20

Նուիրատուութիւններ Ս. Աստուածածին Եկեղեցու

- Տիգր եւ Ալիս Ղազարեան 20
- Տիգր եւ Տիկ. Ժան Քալամազարեան 20
- Յակոբ եւ Սիլվա Մայտոսեան 20
- Սեղա Պոլանեան 100
- Ալիս Գափանեան 20
- Սեղա Պոլանեան 100
- Շանթ Նամարեան 50
- Արշօ Թոփեան 50
- Մարտիրոսեան-Յովհաննէս Ասատուրի 3-րդ տարեկիցին Ասատուր Մարտիրոսեան 40
- Ղազարեան Մովսէսի, Ֆէրիտա-ի, Արրահամի եւ Սոնա-ի Հոգիներուն** Մարգիս եւ Վարդուհի Ղազարեան 50
- Սուլեան Յովհաննէսի, Նաթուրի եւ Վարսենիկի Հոգիներուն** Աւետիս եւ Սիլվա Սուլեան 20
- Ճղեան Աւետիսի, Կարօ-ի, Անգինէ-ի եւ Համայն Ճղեան, Այանեան եւ Տէր Յարութիւնեան զերդաստանի ննջեցեալներու Հոգիներուն** Վահէ եւ Ռուբինա Գասապեան 100
- Սեղոբ եւ Մելիսա Այանեան 100
- Սէֆէրեան-Յովսէֆեան Լուսինի 4-րդ տարեկիցին** Պօղոս եւ Մարալ Շաննազեան 20
- Մարտիկ Տէրաշեան եւ ընտանիք 20
- Նանէսեան Կատարի 40-րդ եւ Քէլչեան Աւետիկ Հոգայն** Շաքէ Քէլչեան եւ զուակուրք 60
- Վիգէն եւ Սիլվա Գալուստեան 60
- Աւագեան Սարգիսի Հոգայն** Գոհար Ալեքս Կէտիկեան 50
- Կարօ Աւագեան 50
- Կէտիկեան Արմէնի 6-րդ տարեկիցին** Գոհար Կէտիկեան եւ զուակուրք 50
- Գոհար Ալեքս Կէտիկեան 50
- Գուշուճեան Յասմիկի մահուան առաջին տարեկիցին** Սեղա Գուշուճեան 100
- Ջէրիկեան Սուրէնի Ա. տարեկիցին եւ Պալեան Ռաֆֆի-ի մահուան 40-րդին** Տիկ. Լուսին Ջէրիկեան 50
- Մարի Պալեան 60
- Տէր եւ Տիկ. Հրաչ Այնեան 50
- Վիգէն եւ Անի Գրիգորեան 100
- Յակոբ Գարակոբեան եւ ընտանիք 50
- Կէտուրչիկեան Շանթի Ա. տարեկիցին** Տէր եւ տիկ. Վահէ Կէտուրչիկեան 80
- Տէր եւ Տիկ. Յարութիւն Գանիկեան 20
- Գանիկեան Սարգիսի, Մարի-ի եւ Համայն Գանիկեան զերդաստանի ննջեցեալներու Հոգիներուն** Տէր եւ Տիկ. Յարութիւն Գանիկեան

- 20
- Գուրգենեան Եղուարդի եւ Պիաթրիս Հոգիներուն** Տիկ. Փոլին Գուրգենեան 200
- Արթիւնեան Յակոբի 40-րդին** Լենա Արթիւնեան 60
- Վահրամ եւ Սառա Ճապարեան 20
- ՕՇան Անահիտի 40-րդին** Նաթան եւ Զուրի ՕՇան 100
- Վահէ եւ Գէմիա ՕՇան 100
- Ժիրայր եւ Սեղա Փանոսեան 25
- Նովիկ եւ Նայիրի Թովթիկեան 25
- Տէր եւ Տիկ. Աւետիս Մալխասեան 20
- Ղազարեան-Իրէկեան Մարի-ի 40-րդին, Իրէկեան Կարապետի, Զապէլի եւ Ջեփիլի Հոգիներուն** Գեորգ եւ Ալիս Տէր Յարութիւնեան 50
- Սարօ եւ Սիլվիան Տէր Յարութիւնեան 50
- Գալայեան Ալիսի 40-րդին** Տէր եւ Տիկ. Վահէ Մերտիլանեան 20
- Պոլանեան Մարգարիտի, Մարիամի, Յակոբի եւ Աստուածի եւ Համայն Պոլանեան զերդաստանի ննջեցեալներու Հոգիներուն** Շուշիկ եւ Յասմիկ Պոլանեան 50
- Տէմիրեան Գալարի 12-րդ տարեկիցին** Մար Վաչէ Տէմիրեան 30
- Քէլչեան Մարգարիտի 2-րդ տարեկիցին** Պարգիս եւ Մարալ Փոլատեան 40
- Տէր Ներսէսեան Նուպարի 40-րդին** Սօսի եւ Նուշիկ Տէր Ներսէսեան 300
- Սաօ Տէր Ներսէսեան 200
- Թովսա Ռանիկ 100
- Տիկ. Զարուհի Բաշաշեան 100
- Հայկ եւ Սեղա Մինասեան 100
- Ռազմիկ Մինասեան 100
- Երուանդ եւ Մանուշակ Տապալազեան 50
- Ժան եւ Ժաննէթ Քալամազարեան 40
- Ջորճ եւ Սամար Տապալազեան 50
- Շանթ եւ Մէրի Մինասեան 40
- Յակոբ Պիլիպեան եւ ընտանիք 40
- Արմէն եւ Թենի Գարբիլեան 50
- Գասապեան Եղիա-ի 5-րդ տարեկիցին, Գասապեան Զարուհի-ի, Մարապետ Բոյր Շաքէի, Մահարեանեան Լուսինի եւ Արապեան Ռէբեկա-ի Հոգիներուն** Տիկ. Ֆէրուզ Գասապեան 50
- Յարութի եւ Սեղա Գասապեան 50
- Պասաճեան Պետրոսի եւ Էլմասի Հոգիներուն** Քրիստին Աւետիսեան եւ ընտանիք 100

Հորիզոն
www.horizonweekly.ca

CONNECT WITH US:
facebook.com/pages/Horizonweekly
@horizonweekly

Ունկնորեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝

ՎԱՆԳՈՒՎԱՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Չայն» CHTO AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00

ՄՈՆԹԵԼԱԼ- «Հայ Կեդրոնի Չայն» 105.1 FM
Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00
Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30
Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00
«Վանայ Չայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

ՀԱՄԻԼԹԸՆ- «Հայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca



NISSAN PRÉSENTE **LE BLITZ DE 5 JOURS**
DU 9 AU 13 MAI SEULEMENT

GRUPE NISSAN
GABRIEL

OBTENEZ JUSQU'À **1 000 \$⁺** DE RABAIS ADDITIONNEL
(Le rabais de 1 000 \$ s'applique au Titan.)

OU JUSQU'À **3 000 \$**
DE RABAIS AU TOTAL*
à l'achat au comptant

SENTRA SV À BOÎTE AUTOMATIQUE
LOCATION À PARTIR DE 201 \$ / MOIS, COMPTANT INITIAL DE 995 \$.

C'EST COMME PAYER **46 \$^{##}** / SEMAINE PENDANT **39** MOIS
INCLUT LE RABAIS 5 JOURS*

- CARACTÉRISTIQUES APPROUVÉES PAR LE FABRICANT**
- BOÎTE AUTOMATIQUE
 - CLIMATISATION AVEC MICROFILTRE D'HABITACLE
 - SIRI^{MD} EYES FREE
 - SIÈGES AVANT CHAUFFANTS
 - CLÉ INTELLIGENTE ET DÉMARRAGE PAR BOUTON-POUSOIR
 - CAMÉRA DE MARCHÉ ARRIÈRE¹

ALLOCATION DE 20 000 KM AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À 0.10 \$/KM



Sentra SR turbo illustrée*


NISSAN GABRIEL
JEAN-TALON
3500, rue Jean-Talon O.
Montréal, QC H3R 2E8
514 509-7777
nissangabrieljeantalon.com
« OUVERT LES SAMEDIS »

NISSAN GABRIEL
ANJOU
7010, boul. Henri-Bourassa E.
Anjou, QC H1E 7K7
514 324-7777
nissangabrielanjou.com
« OUVERT LES SAMEDIS »


Offres du Blitz de 5 jours de Nissan en vigueur du 9 au 13 mai 2017. * L'offre de location est basée sur une allocation de 20 000 km / an (allocation totale de 65 000 km pour un terme de 39 mois) avec kilométrage additionnel à 0,10 \$ / km. Le premier paiement est requis à la signature du contrat. Les frais d'inscription auprès du RDPRM et les frais d'agent pour l'inscription (jusqu'à 77 \$ au total) ne sont pas compris et sont payables à la signature du contrat. Taxes, immatriculation, droits spécifiques sur les pneus neufs (15 \$) et assurances en sus, et exigés à la signature du contrat. L'offre à la location de la Sentra SR turbo 2017 à boîte manuelle illustrée est pour un terme de 39 mois et équivaut à 39 mensualités de 290 \$ (avec 0 \$ en comptant initial) lorsqu'elle est louée par l'entremise de Nissan Canada Finance (NCF). ## Les paiements ne peuvent être faits hebdomadairement. Ils sont uniquement mentionnés à titre informatif. + Le rabais additionnel 5 jours de 500 \$ / 500 \$ / 250 \$ / 1 000 \$ est applicable à l'achat au comptant, à la location ou au financement d'un des modèles neufs 2017 suivants : Sentra / Rogue / Micra / Titan. Le montant des rabais sera déduit du prix de vente négocié avant les taxes. * Le rabais total de 3 000 \$ / 2 000 \$ / 4 000 \$ est composé du rabais 5 jours de 500 \$ / 250 \$ / 500 \$ et d'un rabais au comptant de 2 500 \$ / 1 750 \$ / 3 500 \$, il s'applique uniquement à l'achat au comptant des modèles 2017 suivants : Sentra (à l'exception des modèles SV CVT et SR) / Micra (à l'exception des modèles S à boîte manuelle et SV à boîte automatique) / Rogue SV avec Ensemble toit ouvrant et famille. Cette offre ne peut être combinée aux offres de location ou de financement, ni à aucune autre offre. Le rabais sera accordé sur le prix de vente négocié avant les taxes. † Le rabais total de 11 000 \$ / 9 000 \$ composé du rabais 5 jours de 1 000 \$ / 1 000 \$ et d'un rabais au comptant de 10 000 \$ / 8 000 \$ est applicable à l'achat au comptant ou au financement à un taux standard, uniquement par l'entremise de NCF, d'un Titan Platine Réserve à cabine double / Titan Pro-4X illustré. Ce rabais ne peut être combiné à un taux de location ou de financement subventionné ni à aucune autre offre. 1. Ce dispositif est une aide au stationnement. Il n'élimine pas complètement les angles morts. Il se peut qu'il ne détecte pas tous les objets et n'offre aucun avertissement pour les objets en mouvement. Regardez toujours autour de vous avant de déplacer votre véhicule. Les offres sont sous réserve de l'approbation de crédit par NCF, elles peuvent être modifiées, prolongées ou annulées sans préavis. Modèles illustrés à titre indicatif. Des conditions s'appliquent. © Nissan Canada inc., 2017.



BARRY KAREN GARO
KAZANDJIAN



514
333-3000
 DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE



131 Ch. Bates
 Mont-Royal à partir de
 288 2055 +TPS/TVA



Projet immobilier en Arménie,
 plusieurs modèles de maisons disponibles



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN.com

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
 RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY.com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5